



ԷԶՄԻԱՌԻ

1969-2

ՌՆԺԸ
ԻԵՏԱՐԻ

Յոնիս

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Զ

1969



HA-14.759



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՎԵՀՍՓԱՌ ՀԱՅԲԱՊԵՏԻ Կոնդակը «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիսյանին՝ ամսագրի հրատարակության բանեմեղմանակի առիվ	3
Հաղորդագրություն	5
Հաղորդագրություն	6
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Քսենիեղմանակ	8
ՆԱՐԵԿ ՎՐԴ. ՇԱՔԱՐՅԱՆ—Հովակիմյան աղայություն Բաժնի հայոց քեմին	11
«Էջմիածին» ամսագրի հրատարակության 25-ամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում	15
Հայրապետական «Հայկաշեն» ամսագրոցային շենքի հիմնադրման օրհնություն Բյու- րականում	27
Պատվոգրերի հանձնում «Էջմիածին» ամսագրի խմբագրությանը	31
Ամսվերջի հանդիսություն հոգևոր նեմարանում	33
ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ	40
Խաղաղության պաշտպանության դիմելում	42
Մաղափա աբեղայական Օրմանյանի նամակներից	43
Հովհաննես Մանուկի Բարեղյանի մահը	48
Մատենագիտություն «Արարատ» ամսագրի	49

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 17/VI 1969 թ.: Ստորագրված է տպագրության 21/VII 1969 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 439

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1968 թ.


ԵՐԾՄԻՆԸ


ԴԻՍՍԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԾՄԻՆԸ
ՏՈՒՆԱԿԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԾՄԻՆԸ
ԵՐԾՄԻՆԸ Մ

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ «ԷԶՄԻԱԾԻՆ»
ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳԻՐ ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆԻՆ՝ ԱՄՍԱԳՐԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔՍԱՆՀԻՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

**ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ԶՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾԻՆԻ**

**ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏԵԱՆԻՆ, ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷԶՄԻԱԾԻՆԻ, ՈՂԶՈ՞ՅՆ
ՀԱՅՐԱԿԱՆ, ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ**

Այսօր երբ ուրախ սրտով կ'ողջունենք Մայր Աթոռիս պաշտօնաթերթը «Էջմիածին» ամսագրի 25-ամեակը, Մենք ջերմ գոհունակությամբ կ'ողջունենք նաև զՁեզ, սիրելի Հատիտեան, որ ահա տասնևչորս տարիներէ ի վեր կը խմբագրէք մեր ամսագիրը՝ Ձեզի յատուկ ոգեշնչումով, հմտությամբ ու ծիր եռանդով:

Մեր գահակալութեան շրջանին, Ձեր աշխատանքը՝ թէ որպէս խմբագիր և թէ որպէս հոգևոր ճամբարանի դասախօս, իրաւ նպատակ մը հանդիսացաւ Մայր Աթոռիս կեանքի ճանապարհին, լայն ճառագայթումով անոր գործունէութեան բոլոր երեսներուն վրայ:

Դուք Ձեր բովանդակ սիրտն ու հոգին դրիք Ձեր աշխատանքին մեջ և գալն ամբողջությամբ ընծայաբերեցիք սուրբ Էջմիածնին և մեր եկեղեցիին:

Մօտ քսան տարիներու Ձեր գրական-մանկավարժական վաստակը Մայր Աթոռէս ներս կը հանդիսանայ ճշմարտապէս բարոյական ու իմացական յաղթանակ մը որ արժանի է բոլորիս գնահատանքին:

Արդ, այսու Մեր կոնդակով կ'օրհնենք զՁեզ և Ձեր պտղատառ վաստակը, մաղթելով Ձեզի արևշատ բազում տարիներ, որպէսզի նոյն նուիրումով ու եռանդով շարունակէք ծառայել Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին և հայ ժողովուրդին, որուն շնորհառատ զաւակներէն մին կը հանդիսանաք:

«Ողջ լերուք, զօրացեալ սուրբ Հոգով, և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ. ամէն»:

Վաչագհ Բ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 1-ն յունիսի
1969 փրկական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԺԶ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 859





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի դիվանը այսու լիազորված է հաղորդելու ի գիտություն մերազն ժողովրդյան, թե Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Ս. Վազգեն Ա Հայրապետի օրհնությամբ առաջիկա սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 2-ը հրավիրված Հայաստանյայց առաքելական եկեղեցու եպիսկոպոսական ժողովի օրակարգի հարցերը լինելու են՝

1. Հայ եկեղեցու ներքին միության ամրապնդում.
2. Հայ նահատակաց սրբացում.
3. Հայ եկեղեցու բարեկարգության հարցեր.
 - ա) Մաշտոցի կրճատում.
 - բ) Պահոց օրերի կրճատում.
 - գ) Պսակի արգիլյալ օրերի վերաքննություն.

4. Կուսակրոնության հարց.

5. Նգովքների վերացում.

6. Բոլոր եկեղեցիների հետ Զատիկը միևնույն օրում տոնելու հարց.

7. Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանություն.

8. Հայ եկեղեցին և Էկումենիզմը.

9. Հայաստանյայց եկեղեցու վերաբերմունքը՝ մարդկությանը հուզող և հատկապես աշխարհի խաղաղությունը ամրապնդող հարցերի նկատմամբ:

Մայր Աթոռիս առաջադրանքն է, որ մեր սուրբ եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալները և բոլոր եպիսկոպոսները, միասիրտ ու միախորհուրդ, սուրբ Հոգու ներշնչմամբ և մեր ժողովրդի հոգևոր ու ազգային բարձր շահերի գիտակցությամբ, ժողովում քննարկման ենթարկեն վերոհիշյալ հարցերը և եզրակացությունները ներկայացնեն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նկատմամբ ու կանոնական տնօրինությանը՝ ի հարկին ազգային-եկեղեցական ժողովի գումարմամբ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ը Իր երրորդ հայրապետական այցելությունը շնորհեց Ադրբեջանի հայոց թեմին, հունիսի 7—10-ը:

Վեհափառ Հայրապետը շաքաթ օրը, հունիսի 7-ի երեկոյան, Բաքվի և Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում նախագահեց հանդիսավոր ժամերգության և հաջորդ օրը, կիրակի, և պատարագ մատուցեց և քարոզեց խոսմերամ հայ հավատացյալ ժողովրդին:

Հետմիջօրեի Ադրբեջանի թեմակալ առաջնորդ տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթրույանը և թեմական խորհուրդը ճաշկերույթ տվեցին ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Ծաշկերույթին ներկա էին Ադրբեջանի և Անդրկովկասի Ծեյխովիսլամ Սուլեյմանզադեն, ուս պրավոսլավ եկեղեցվո Ստավրոպոլի և Բաքվի եպիսկոպոս Նորին Սրբազնություն Իոնան՝ իրենց շքախմբերով, ինչպես և այլ հարանվանությանց ներկայացուցիչներ:

Ներկա էին նաև՝ Ադրբեջանի Մինիստրների սովետին առընթեր կրոնից գործերի լիազոր պրն. Աբդուլլահ Ախադովը և իր տեղակալ պրն. Սիմեոն Խլեվովը:

Երկուշաբթի, հունիսի 9-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով պաշտոնական այցելություն տվեց Սովետական Ադրբեջանի Մինիստրների սովետի նախագահ, Նորին Վսեմություն Էնվեր Ալիխանովին՝ հայ եկեղեցու ողջույնը հաղորդելով Ադրբեջանի եղբայր ժողովրդին և կառավարության: Վարչապետի և Վեհափառ Հայրապետի միջև տեղի ունեցավ սիրալիր, ջերմ գրույց:

Վեհափառ Հայրապետը նույն օրը փոխ-այցելություն տվեց Ադրբեջանի և համայն Անդրկովկասի Ծեյխովիսլամին և ապա եղավ ուսաց Մայր եկեղեցում, ուր Նրան դիմավորեցին Նորին Սրբազնություն Իոնան եպիսկոպոսը, քահանայից դասը և հոծ թվով ուսու հայ հավատացյալներ: Տեղի ունեցավ

հանդիսավոր ժամերգություն՝ քառաձայն երգչախմբի կատարմամբ: Վեհափառ Հայրապետը քարոզով մխիթարեց և ապա օրհնեց հավատացյալ ժողովրդին:

Ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, երեկոյան տեղի ունեցավ մեծ ճաշկերույթ՝ տրված Ադրբեջանի Ծեյխուլիսլամի և ոռոսաց եկեղեցու թեմական առաջնորդի կողմից: Ծաշկերույթին ներկա էին նաև կրոնից լիագործ և իր տեղակալը: Փոխանակվեցին ողջույնի և եղբայրական սիրո խոսքեր՝ ոգևորիչ մթնոլորտում:

Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամներն էին՝ գեր. տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը՝ առաջնորդ թեմին հայոց Վրաստանի, հոգ. տ. Նարեկ վրդ. Ծաքարյանը՝ վանահայր Գեղարդա վանքի, և Հայկ Առաքելյանը՝ դիվանապետ Մայր Աթոռի:

Վեհափառ Հայրապետը վերադարձավ սուրբ Էջմիածին հունիսի 10-ին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ

12 հունիս 1969 թ.,

Ս. Էջմիածին





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՔՄԱՆՀԻՆԳԱՄՅԱԿ

Այս տարի հունվարին լրացավ Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի հրատարակության քսանհինգամյակը։ Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ հունիսի 1-ին, կիրակի օրը, Մայր տաճարում ս. պատարագի մատուցմամբ, հայրապետական քարոզով և հոգեհանգրստյան պաշտոնի կատարումով և ապա երեկոյան Վեհարանի ընդունելությանը դահլիճում հոբելյանական հանդիսությամբ նշվեց հիշարժան այդ տարեթիվը։

Հանդիսությանը նկարագրությունը տրգվել է ամսագրի սույն համարի 15—26 էջերում։

Մայր Աթոռի առաջին պաշտոնաթերթ «Արարատ»-ը հրատարակվել է 1868—1919 թվականներին։

«Էջմիածին» ամսագիրը հրատարակվում է 1944 թվականի հունվարից՝ նախաձեռնությամբ ազգընտիր տեղակալ տ. Գևորգ արքեպ. Չորեքյանի։

Մինչև 1944 թվականը Մայր Աթոռի մամուլի պակասը մասամբ լրացնում էր «Սիոն» ամսագիրը՝ ս. Էջմիածնից ուղարկված հայրապետական կոնդակների, Գերագույն հոգեվոր խորհրդի զեկուցագրերի, հաղորդագրությունների և այլ պաշտոնական թղթակցությունների հրատարակությամբ։ «Սիոն»-ը սկսվել էր վերահրատարակվել Նյու-սաթեմում, Երիշե Դուրյան պատրիարքի օրով, 1927 թվականի հունվարից, Բաբգեն եպս. Կոյունեյանի խմբագրապետությամբ։

«Էջմիածին» ամսագիրը հանդիսացավ «Արարատ»-ի շարունակությունը, նրա հայագիտական, եկեղեցագիտական, պատմաքանասիրական ավանդույթների շարունակողն ու ժառանգորդը մո'ր հանգամանքներում և մո'ր իրադարձությունների մեջ։

«Էջմիածին» ամսագրի խնդիրն էր՝ հոգեվոր սնունդ ջամբել հայ հավատացյալներին, արտագին կապ պահպանել Մայր Աթոռի և մեր նվիրապետական Աթոռների և թեմերի, հայրենիքի և սփյուռքի միջև, զարկ տալ հայ եկեղեցագիտական-կրոնական գրականությանը, արձագանքել հայ և միջեկեղեցական կյանքում մեր եկեղեցու և ժողովրդի համար կարևորություն ունեցող իրադարձություններին, պատկերել հայրենի երկրում մեր կյանքի կոչված հայրենադարձ և հայրենաքնակ ժողովրդի հոգևոր, իմացական ու տնտեսական մվաճումները և իր էջերը բանալ մասն համամարդկային բնույթ կրող այժմեական, արդիական կարևորագույն հարցերին, ինչպիսիք են՝ համաշխարհային խաղաղության, եկեղեցիների համագործակցության և ժողովուրդների եղբայրության հարցերը։

Մայր Աթոռի մոր պաշտոնաթերթի հրատարակության անհրաժեշտությունը ինքնին հասկանալի էր, որի ապացույցը հայրենի երկրի և սփյուռքի հայության դրական վերաբերմունքը եղավ։

Արդարև, «Էջմիածին» ամսագրի հրատարակությունը ջերմորեն և երախտագիտությամբ էր ողջունվում ամեն տեղ։

Երջանկաբիշատակ Գևորգ Զ կաթողիկոսի անվան և գործունեության հետ է կապված սերտորեն Մայր Աթոռ ս. Էջմիածնի մեր օրերի հոգևոր վերազարթոնքի և վերակազմության մեծ և պատասխանատու աշխատանքները և այդ թվում մասն ամսագրի հրատարակությունը։ Նա եղավ 1944 թվականից սկսած համագալին ու դարավոր այս մեծ հաստատության վերակենդանության իմաստուն ու հավատավոր մարտաբախտը, առաքելատիպ վերանորոգիչը, օժոված պայծառ իմացականությամբ, գործ-

նական ձեռնբերեցությամբ, անձնագրի նվիրումով:

Գևորգ Զ-ը միայնակ ու փաստորեն ոչընչից սկսեց իր գործը, բայց հավաստքով ու տեսիլքով, ու հանդիսացավ մեր եկեղեցու, մեր ժողովրդի և հայրենիքի կյանքում պատմական նշանակություն ունեցող վճռական ու բացառիկ իրադարձություններով հարուստ շրջանի նոր կացության նոր ու հազվագյուտ դեպքերը և Մայր Աթոռ ս. Էջմիածինը դրեց մի անգամ ևս իր համագալին առաքելության բարձրության վրա, որպես մեր ժողովրդի Ուխտի Տապանակի, որպես բովանդակ հայության ազգային-եկեղեցական ու հոգևոր կյանքի կենտրոնաձիգ ուժի:

Մայր Աթոռի վերակազմություն, հոգևոր ճեմարանի վերաբացում, ամսագրի հրատարակություն, վաճառական-թեմական ու վերանորոգչական աշխատանքները եղան նրա կազմակերպող մտքի, եկեղեցաշեն ու հայրենամիտ հոգու արգասիքները:

1954 թվականի մայիսի 9-ին, երբ Նա փակում էր իր աչքերը, Մայր Աթոռի զարթոնքը արդեն դրված էր ամուր հիմքերի վրա:

1955 թվականին, հոկտեմբերին, ս. Լուսավորչի Աթոռի վրա էր բարձրանում Ս. Ս. Վազգեն Ա. Հայոց Հայրապետը, որ Իր դեպի ս. Էջմիածինն ունեցած պաշտամունքով և իրավ հայրենասիրությամբ շարունակում էր Գևորգ Զ-ի եկեղեցական և հայրենասիրական գործունեությունը, երիտասարդական թափով, ընդարձակ արդյունավորությամբ և իրագործումներով: Այդ գահակալությամբ մի նոր էջ էր բացվում Մայր Աթոռի ժամանակակից պատմության և հայ եկեղեցու մեր օրերի տարեգրության մեջ:

Այդ օրվանից անցել են աշխատանքի, կառուցումների, վերաշինության, հաջողությունների և դժվարությունների տասնչորս տարիներ՝ ի հոգևոր, մշակութային, եկեղեցաշեն և հայրենամիտ ոգևորիչ իրագործումներով:

Այդ սրտատույ ճիգերի, կառուցումների, հաջողությունների և դժվարությունների կենդանի օրագրությունն է հանդիսացել «Էջմիածին» ամսագիրը, հայրապետական կոնդակների, քարոզների, ելույթների, նամակների հրատարակություններով, որոնք միշտ զարդարել են ամսագրի առաջին էջերը, և որոնց միջոցով Հայոց Հայրապետը Իր խոհերն ու ապրումները, Իր հոգին ու սիրտն է բացել Իր հոգևոր զավակների առաջ, հայրապետական հեղինակությամբ, ընդհանրապես լավատեսությամբ և երբեմն է՝ դառնությամբ, բայց միշտ սիրով ու համբերությամբ: «Էջմիածին» ամսագիրը եղել է Հայոց արդի Հայրապետի սրտին ամենամոտ

ձեռնարկը: Վազգեն Ա. Հայրապետը մեր ժողովրդի քրիստոնեական և հայեցի կրոնա-բարոյական, հայրենասիրական դաստիարակության գործում մեծ և պատասխանատու դեր է հատկացրել «Էջմիածին» ամսագրին:

Ամսագիրը ընթացել է Վեհափառ Հայրապետի գծած ուղիով: Նա՝ է իրական խմբագրապետը:

Ն. Ս. Օծությունը հետևողականորեն և արթնամտությամբ հետևում, հսկում է ամսագրի հրատարակության վրա, որպես Մայր Աթոռի պաշտոնաթերթի, մի հանգամանք, որը բարձրացնում է պատասխանատվության զգացումը խմբագրական աշխատանքում: Ամեն մի բառ և նախադասություն անցնում է Հայոց Հայրապետի սրտի ու մտքի միջով, հասնելու համար իր ժողովրդի սրտին ու գիտակցությանը, որպես «հայրապետական հրամանա» տպված խոսք և մտածում, պատգամ և օրհնություն:

1956 թվականին, հուլիսին, հայրապետական կարգադրությամբ Մայր Աթոռում «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ունենում էր իր առանձին, մասնավոր խմբագրական գրասենյակը: Ամսագրի տպաքանակը 2000-ից բարձրացվում էր 3500-ի: Մեծ ուշադրություն էր դարձվում ամսագրի բովանդակությանը, նյութերի ընտրությանը, գեղարվեստական ձևավորմանը և տպագրության կանոնավորությանն ու մաքրությանը:

Ն. Ս. Օծությունը Իր գահակալության առաջին իսկ օրից մտածում էր օժտել «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը նաև սեփական տպարանով: Մինչև 1961 թվականը ամսագիրը տպվում էր Երևանի տպարաններում:

1961 թվականի հոկտեմբերին ԱՄՆ-ի հայոց նվիրատվությամբ բացվում էր Մայր Աթոռի տպարանը, լույսի նոր վառարան մը մեր եկեղեցիին և համայն հայ ժողովրդի կյանքին մեջ,—գրում էր Հայոց Հայրապետը տպարանի բացման առթիվ գրած Իր կոնդակում, 1961 թվականի հոկտեմբերի 16-ին:

Վազգեն Ա-ը գահակալեց նոր ու ավելի նպաստավոր պայմաններում և ամսագրի առաջ դրեց նոր ու այժմեական ա՛յլ խընդիրներ:

1956-ից սկսած «Էջմիածին» ամսագիրը ամենայն կարևորությամբ իր էջերը տրամադրում էր հայրապետական արտասահմանյան ուղևորությունների պատմական նշանակությանը, սփյուռքի մեր ազգային-եկեղեցական կյանքի տարագրության մեջ, որպես Ն. Ս. Օծության գահակալությունը հատկանշող ու նշանավորող իրադարձություն:

Ն. Ս. Օծությունը արդարև մեծ կարևորություն է տալիս հովվապետական իր այցելություններին: Ցանկանում էր անձամբ տանել Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնություններն ու վերածնված հայոց մայր հողի ու ժողովրդի ողջունները սփյուռքին, ճանաչել սեր նվիրապետական Աթոռներն ու թեմերը, ծանոթանալ իր ժողովրդի ապրումներին, հույսերին, մտահոգություններին, հանգամանորեն շփվել սփյուռքի ազգային-եկեղեցական կյանքի հետ և իր այցելությամբ, քարոզներով մխիթարել, ոգևորել ու ամրապնդել կապը Մայր Աթոռի, սփյուռքի ու հայրենիքի միջև:

Հայ սփյուռքը թանկագին աղամանդի նրման փշրված ու ցանված օտար հորիզոնների տակ ու ենթակա տարբեր մշակույթների ազդեցության, չի կարող ապրել, եթե չխառնվելի գաղափարական ամուր հիմքերի վրա:

Ս. Էջմիածին և մայր հայրենիք. ահա երկու գաղափարականներ, երկու սրբություններ, որոնց ներշնչումով և տեսիլքով միայն հայ սփյուռքը կարող է գոյատևել: Սփյուռքի համար չկա այլ փրկարար ճանապարհ, եթե ոչ բոլոր հայ հոգիների եղբայրացումն ու միավորումը՝ Էջմիածնի լույսի ու հայրենիքի վեհ զգացումի մեջ:

Ով այսօր իր հոգին չի լուսավորում ս. Էջմիածնից ճառագայթող լույսով և իր սիրտը չի տաքացնում վերածնված հայրենիքի լուսավոր ապրումներով, ոչ մեկ բանով կարող է ջերմանալ, հայանալ ու գորանալ: Սփյուռքի հայության գիտակցության մեջ այս մտածումը արդեն իսկ հայրապետական ուղևորությունների առիթով բյուրեղացած հավատք, ապրում ու առաջնորդող ոգի է դարձել:

Ահա թե ինչո՞ւ «Էջմիածին» ամսագիրը իր խմբագրականներում ամենայն կարևորությամբ նշում էր, մեկնաբանում հայրապետական ուղևորությունների ազգային-եկեղեցական, միջեկեղեցական, միջպետական նշանակությունը, երբ Հայոց Հայրապետը նման առիթներով անհրաժեշտ էր համարում նաև, որպես հայ եկեղեցու գերագույն Պետ և Գլուխ, ներկայանալ իր այցելած երկրների պետական ու հոգևոր իշխանությանց ու լսել բարի վկայություններ հայ եկեղեցու, հայ ժողովրդի բարեմասնությանց մասին:

Ամեն տեղ էր Նա՛, Հայոց Հայրապետը, իր մեծ սրտով, մտքով ու խոհերով: Նրա հայրապետական նաչվածքից չի վրիպել երբեք իր ժողովրդին և եկեղեցուն վերաբերող ոչ մի իրադարձություն: Նրա լայն ու խորունկ սիրտը ընդգրկել է աշխարհի բոլոր հայաբնակ վայրերը՝ Անթիլիաս, Էրուսա-

ղեմ, Կ. Պոլիս, Եվրոպա, հեռավոր Ամերիկաներ, Սերձավոր Արևելք, Եգիպտոս, Եթովպիա, Հնդկաստան, Ավստրալիա, միութենական հանրապետություններ:

Վազգեն Ա Հայոց Հայրապետի օրով «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը դարձավ նաև Մայր Աթոռի հրատարակչականը: Խմբագրության նախաձեռնությամբ և աշխատանքով կատարված Մայր Աթոռի հրատարակությունների ցանկը տպված է ամսագրի տպի համարի 21—22 էջերում:

1965 թվականին, հայրապետական բարեհաճ կարգադրությամբ, «Էջմիածին» ամսագրի խմբագրին օգնելու համար կազմվեց խմբագրական մարմին՝ Մայր Աթոռի միաբաններից, հոգևոր ճեմարանի դասախոսներից և այլ հարգարժան մտավորականներից բաղկացած:

1944—1955 թվականներին, Գևորգ Զ կաթողիկոսի գահակալության օրոք, «Էջմիածին» ամսագիրը ունեցել է երեք խմբագիրներ. պրոֆ. Առաքել Առաքելյանը (1944—1947 թթ.), Լևոն Կիսիբեկյանը (1948—1950 թթ.), և ապա՝ պրոֆ. Նշուտ Գ. Արքահանյանը (1950—1955 թթ.):

1956 թվականից սկսած, Վազգեն Ա Հայոց Հայրապետի գահակալության առաջին իսկ օրերից, «Էջմիածին» ամսագիրը խմբագրել է Արթուր Հատիսյանը:

«Էջմիածին» ամսագրի հրատարակությունը մշակույթային ուշագրավ երևույթ է հայ լրագրության պատմության և Մայր Աթոռի ժամանակակից տարեգրության մեջ, հայրենական մշակույթի ծաղկման այս փառահեղ օրերին:

«Էջմիածին» ամսագիրը դարձել է ոչ միայն հայ հավատքի, եկեղեցափրության, հայրենասիրության և արդիականության հարցերին նվիրված ամբիոն, այլ նաև հալածիտական լուրջ հրատարակություն, որին իրենց թանկագին աշխատակցության բաժինն են քերել և՛ մայր հայրենիքի, և՛ սփյուռքի հայ բանասիրական մտքի պայծառ ու վստահավոր հոգևորական և աշխարհական ներկայացուցիչները:

«Էջմիածին» ամսագրի հրատարակության քսանհինգամյակի առիթով մեր ամենախոնարհ և որդիական հարգանքն ու երախտագիտությունը մի անգամ ևս ներկայացնում ենք Ամենայն Հայոց Հայրապետին ու կրկնում մեր հավատարմության ու ծառայության արբանյակ ուխտը իր բարձր ղեկավարության և օրհնության ներքո շարունակելու «Էջմիածին» ամսագրի միջոցով Մայր Աթոռի սպասը ի նպաստ մեր մշակույթի զարգացման, ի պայծառություն հայ եկեղեցու և ի մխիթարություն իր մեծ սրտին:

«ԶՔոյս ի Քոյոց Քեզ», Հայոց արի և բարի Հայրապետ:



ԿԱՐԵԿ ՎՐԴ. ՇԱՔԱՐՅԱՆ

ՀՈՎՎԱԳԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

1969 թվականի հունիսի 7-ից 10 օրերին Նորին Սրբություն Ս. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը երրորդ անգամը լինելով եռօրյա հովվապետական այցելություն տվեց Բաքվի հայոց թեմին և հավատացյալ ժողովրդին:

Հունիսի 7-ին, շաբաթ օրը, առախոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռի միաբանության և պաշտոնեության ուղեկցությամբ առաջնորդվեց Երևանի օդանավակայան:

Այստեղ Նրան ճանապարհելու էին եկել նաև Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Կ. Դալլաքյանն ու տեղակալ պ. Ս. Հովհաննիսյանը:

Այս ուղևորության ժամանակ Վեհափառ Հայրապետին ուղեկցում են վրահայոց թեմի առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը, ս. Գեղարդա վանքի վանահայր տ. Նարեկ վրդ. Ծաքարյանը և Մայր Աթոռի դիվանապետ պ. Հ. Առաքելյանը:

Ժամանում. «Ան—24» օդանավը մոտ մեկ և կես ժամյա խաղաղ ու հանգիստ թռիչքից հետո հասնում է Բաքու: Հայոց եկեղեցու գերագույն պետին ողջունելու համար օդանավակայան էին եկել Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը, թեմի քահանա հայրերը, թեմական և

եկեղեցական խորհուրդների պատվարժան անդամներ Ա. Միրզոյանը, Ա. Կարախանյանը, Ն. Աթանեսյանը, մտավորականներ ու հավատացյալ ժողովուրդը: Հայոց Հայրապետին ողջունելու էին եկել նաև Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի լիազոր պ. Արդուլյա Ախադովն ու տեղակալ պ. Սիմեոն Խլեվովոյը, Բաքվի ռուս համայնքի անունից՝ տ. Պավել ավագ քահանան, մահմեդական համայնքի կողմից և նրա պետի, Օելխուլիսյամի անունից՝ Մուլլա Բյուլբյուլը, Մուֆթին և ուրիշներ:

Բարիգալստյան և ողջույնի ջերմ խոսքերից հետո Վեհափառ Հայրապետը Իր ջրախմբով առաջնորդվում է «Ինտուրիստ» հյուրանոցը:

Երեկոյան ժամը 18.30-ին Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ի հնչյունների և զանգերի դողանքների ներքո մուտք է գործում Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցին և նախագահում կիրականտի երեկոյան ժամերգությանը: Թեմակալ առաջնորդ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը, հանուն թեմական և եկեղեցական խորհուրդների ու հայ հավատացյալ ժողովրդի, ողջունում է Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունը և բարի գալուստ մաղթում:

Պատասխան խոսք է ասում Վեհափառ Հայրապետը: Նա բոլորին ողջունում է, բաշխում ս. Էջմիածնի օրհնությունները: Հայոց Հայրապետը օրհնում է նաև եղբայրական Ադրբեջանը և նրա աշխատասեր ժողովրդին:

Կիրակիների երեկոյան արարողության ավարտին հավատացյալների բազմությունը աջահամբույրով Վեհափառ Հայրապետին իր սերն ու հարգանքն է հայտնում:

Հայրապետական հանդիսավոր ս. պատարագ և քարոզ

Հունիսի 8-ին, կիրակի օրը, ժամը 11-ին, Բաքվի հայոց ս. Գրիգոր առաջնորդամիստ եկեղեցում հանդիսավոր հայրապետական ս. պատարագ է մատուցվում: Ս. սեղանին սպասարկում են՝ տ. Կոմիտաս և տ. Հուսիկ եպիսկոպոսները, տ. Նարեկ վարդապետն ու տ. Գրիգոր քահանան, սարկավագներ, դպիրներ:

Եկեղեցին լիքն է հավատացյալ բազմությամբ: Հայոց Հայրապետի ս. պատարագին ներկա են նաև բազում ուսումնասիրողներ: Ստավրոպոլի և Բաքվի թեմի առաջնորդ տ. Հովհանն եպիսկոպոսը, իմանալով Հայոց Հայրապետի Բաքու ժամանումը, փութացել էր գալու Ստավրոպոլի թեմից Բաքու՝ ողջունելու Նրան և արժանանալու Ն. Ս. Օծության օրհնությանը:

Ս. պատարագի երգեցողությունը վերնատրեմից կատարում է եկեղեցու երկսեռ դպրաց քառաձայն դասը:

«Հայր մեր»-ից առաջ «Ուղիղ եղիցին առօրթ իմ, որպես խունկ առաջի Քո Տեր» բնաբանով քարոզում է պատարագիչ Վեհափառ Հայրապետը. շեշտում հավատացյալի կյանքում աղոթքի և հավատքի անհրաժեշտությունը: Աղոթքը, որպես խունկի անուշահոտություն, մաքուր և ուղիղ պետք է առ Աստված բարձրանա: Վեհափառ Հայրապետը նշում է, որ ահա՛ այս գիտակցությամբ և այս հավատով հայ հավատացյալները միշտ հաճախեն ս. եկեղեցի, ուր և միշտ կհնչի ս. աղոթքն ու ս. երգը:

Վեհափառ Հայրապետը իր քարոզի վերջում օրհնում է նաև Բաքվի հայ հավատացյալ ժողովրդին և որպես հուշ հայրապետական իր այցելության ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն նվիրում է ս. Էջմիածնից բերած հայկական ոճով արծաթե մի գեղեցիկ սեղանի խաչ:

Վերջում Վեհափառ Հայրապետը սրտագին մաղթանքներ արեց նաև Ադրբեջանի հաճախակի այցելությանը, որպեսզի այն անհի, գարգանա խաղաղության, բարօրության և վերելքի մեջ:

Պաշտոնական ընդունելություն՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի

Կիրակի օրը, երեկոյան ժամը 16-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Բաքվի հայոց թեմական և եկեղեցական համայնքը, առաջնորդ տ. Հուսիկ եպիսկոպոսի գլխավորությամբ, պաշտոնական ընդունելություն է կազմակերպում «Ինտուրիստ» հյուրանոցի ընդունելությունների հարկաբաժնում:

Ընդունելությանը մասնակցում էին շուրջ 100 հրավիրյալներ, այդ թվում նաև՝ կոնական գործերի լիազոր Արքույյա Ախարովն ու իր տեղակալը, ուսումնական համայնքի առաջնորդը՝ իր վեց քահանա հայրերով, մահմեդական համայնքից՝ Օնեխուլ-խալամի ներկայացուցիչն ու իր օգնականները: Ընդունելությանը հրավիրված էին նաև Բաքվի ավետարանական համայնքի ներկայացուցիչները, մտավորականներ և շատ այլ հյուրեր:

Ընդունելության ընթացքին, որն արդեն բացված էր Վեհափառ Հայրապետի աղոթքով, ողջունի և բարիգալստյան ճառեր են փոխանակվում: Ի մասնավորի Հայոց Հայրապետի ներկայությամբ ողջունում են՝ տ. Հուսիկ եպիսկոպոսը, կոնական գործերի լիազոր պ. Ա. Ախարովը, Մուֆթին, Տ. Զիմ-չենկոն՝ ավետարանական համայնքից, Հմայակ Կարախանյանը՝ մտավորականության կողմից, և ուրիշներ: Բաժակ է առաջարկվում հայ, ադրբեջանցի և ուսումնականների եղբայրության և բարեկամության կենաց: Վեհափառ Հայրապետը կրկին օրհնում է եղբայր ժողովուրդներին և մաղթում, որ աշխարհում եղբայրությունը ժողովուրդների միջև և խաղաղությունը լինեն հարատև, անխախտ և հավիտյան:

Ընդունելությանը յուրահատուկ փայլ էր տալիս նաև Բաքվի հայ եկեղեցու երգչախմբի երգերն ու մենակատարումները Մարկ Սիմոնյանի գլխավորությամբ: Հաճույքով պետք է նշել, որ այս շնորհալի երգչախումբը առաջին անգամ լինելով ի պատիվ Վեհափառ Հայրապետի երգեց Այ. Հարությունյանի ստեղծագործությունը՝ «Զոն՝ Ամենայն Հայոց Հայրապետի ծննդյան 60-ամյակին»:

Այս ընդունելությունը, ուր բարեկամության և եղբայրության մթնոլորտ էր ստեղծվել, երկար կմնա ներկաների հիշողության մեջ:

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետը հյուրանոցի իր հարկաբաժնում բարեհաճեց պատասխանել Ադրբեջանական հեռագրական գործակալության թղթակցի հարցերին:

Պաշտոնական այցելություններ

Հունիսի 9-ին, երկուշաբթի օրը, առավոտյան Վեհափառ Հայրապետը Իր ջբախմբով պաշտոնական այցելություն տվեց Ադրբեջանի Միևհատրների սովետի նախագահ, Նորին Վսեմություն Էմվեր Ն. Ալիխանովին:

Վեհափառ Հայրապետի և պ. վարչապետի միջև տեղի ունեցավ ջերմ, բարեկամական գրույց՝ սրտագին մթնոլորտում: Հայոց Հայրապետը Նորին Վսեմություն Է. Ն. Ալիխանովին հաղորդեց մասնաժողովի և հայ եկեղեցու ողջույնը և Իր օրհնությունը՝ եղբայրական Ադրբեջանին, նրա բարեխնամ կառավարությանը և համայն ժողովրդին:

Ժամը 11-ին Նորին Սրբությունը պաշտոնական այցելությամբ եղավ մասնաժողով-կան մահմեդական համայնքի Ծեխտյուխյան Ալիադա Սուլեյմանզադեի մոտ: Ծերունազարդ կրոնապետը Հայոց Հայրապետին ընդունեց իր ընդունարանում՝ ծաղիկներով ու ջերմ ողջույնի խոսքերով: Հայոց Հայրապետին ողջունելու համար այնտեղ էին եկել մասնաժողովի քարտուղար-օգնական Մուլլա Բյուրբյուլը, պոմոնիների Մուֆթին, գործերի կառավարիչ Հաջի Աբբաս Կուլին և շատ ուրիշներ, ինչպես նաև Ադրբեջանում կրոնական գործերի լիազոր Ա. Սիադովը: Այցելությանը ներկա էր նաև ռուս համայնքի պետ տ. Հովհաննես եպիսկոպոսը:

Ի պատիվ Վեհափառ Հայրապետի տրվեց մրգասեղան, և բոլոր ներկաների կողմից արտասանվեցին բարիգալստյան և բարեկամության ջերմ խոսքեր:

Սրտագին մթնոլորտում անցած ընդունելությունը վերջանում է հուշանվերների փոխանակումով:

Վեհափառ Հայրապետը այնուհետև այցելում է Բաքվի ռուսական և Աստվածածին եկեղեցին: Խանդավառ մթնոլորտում Հայոց Հայրապետի ժամանումից առաջ հնչում են եկեղեցու դռնակները և եկեղեցում՝ հաղթական հոգևոր երգեր:

Ահա Վեհափառ Հայրապետը եկեղեցու մուտքի մոտ դիմավորվում է առաջնորդ տ. Հովհաննես եպիսկոպոսի, և Աստվածածին եկեղեցու ավագերեց Ա. Դ. Իվանով քահանայի և մյուս քահանա հայրերի կողմից աղ ու հացով, խաչով ու բարիգալստյան ջերմ խոսքերով: Այնուհետև Հայոց Հայրապետը առաջնորդվում է եկեղեցի: Ի պատիվ Վեհափառ Հայրապետի տրվում է հոգևոր ճոխ համերգ:

Հանդիսավոր պահը վերջանում է, և Վեհափառ Հայրապետին հրավիրում են խորանի առաջ՝ օրհնելու ներկա հավատացյալ ժողովուրդին:

Նախ Վեհափառ Հայրապետը ջերմ խոսքեր է ուղղում ներկա հավատացյալներին, որից հետո և Էջմիածնի և Իր օրհնությունները բաշխում բոլորին: Ծնորհակալության ու երախտագիտության ջերմ խոսք է ասում առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը, որից հետո էլ սկսվում է հավատացյալների աջահամբույրը: Վեհափառ Հայրապետը և Տիրամոր նկարն է նվիրում եկեղեցուն, իսկ եկեղեցու բոլոր քահանաներին, ինչպես նաև երգեցիկ խմբին՝ և Էջմիածնից բերված խաչիկներ, «Ս. Էջմիածին» կրծքանշաններ և «Ս. Էջմիածին» գունավոր նկարներ:

Ընդունելություն Բաքվի մահմեդական և ռուս համայնքների կողմից՝ ի պատիվ Հայոց Հայրապետի

Հունիսի 9-ին, երկուշաբթի օրը, երեկոյան, Բաքվի մահմեդական և ռուս համայնքները, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպել էին մեծ ընդունելություն, որին ներկա էին, բացի հայ համայնքի ղեկավար ներկայացուցիչներից, Ծեխտյուխյան Ալիադա Սուլեյմանզադեն ու իր հոգևոր ջեխ օգնականները, տ. Հովհաննես եպիսկոպոսն ու իր ռուս եկեղեցու հոգևոր և աշխարհական ներկայացուցիչները, Բաքվի ավետարանական համայնքի պետ Տ. Զիմչենկոն և իր գործակիցները և ուրիշներ:

Սեղանը օրհնում են երեք հարանվանական կրոնական համայնքների ղեկավարները: Առաջին բաժակը հոտնկալս առաջարկվում է օրվա մեծ հյուրի՝ Հայոց Հայրապետի թանկագին կենաց: Ծեխտյուխյանի այս առաջարկին միանում են նաև տ. Հովհաննես եպիսկոպոսը և ուրիշներ:

Բոլոր ելույթ ունեցողները դրվատանքի ջերմ խոսքերով հանդես են գալիս՝ Վեհափառ Հայրապետին համարելով ժողովուրդների բարեկամության ջատագովի ու խաղաղության պայքարի մեծ մարտիկի: Այս կենացի առթիվ ռուս եկեղեցու համայնքի ներկա երգչախումբը երգում է «Մնոգոյե լետո» («Երկար տարիներ») ռուսերեն հոգեվոր ձոն-մաղթերգը:

Հայոց Հայրապետը Իր շնորհակալության արտաբայական արտասխան խոսքն է ասում: Ապա նույն ջերմությամբ բաժակներ են առաջարկվում նաև Ծեխտյուխյան Ալիադա Սուլեյմանզադեի և ժամայն Ռուսիո պատրիարք Ալեքսիի կենաց:

Ընդունելությունն իրոք որ վերածվում է եղբայրության և բարեկամության սեղանի:

Ընդունելության ավարտին հուշանվերներ են փոխանակվում:

Վերադարձ Մայր Աթոռ

Հունիսի 10-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Բաքվի Իր հոտին տված եռօրյա հովիւսպետական այցելությունից խորապես մխիթարված, Իր շքախմբով վերադարձավ Մայր Աթոռ:

Նորին Սրբությանը ճանապարհելու համար Բաքվի օդանավակայան էին եկել տ. Հուսիկ եպս. Սանթրոյանն ու թեմական և եկեղեցական խորհուրդների ներկայացուցիչներ, քահանաներ և հավատացյալների բազմությունը: Հայոց Հայրապետին ճանապարհում էին նաև տ. Հովնան եպիսկոպոսն ու իր քահանայից դասը և ռուս հավատացյալ ժողովուրդը:

Հայոց Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու էին եկել նաև Ադրբեջանական ՍՍՀ կրոնական գործերի լիազոր Արդուլաս Ախադովն ու իր տեղակալը:

Երևանի օդանավակայանում Վեհափառ


Հայրապետը դիմավորվում է Մայր Աթոռի միաբանության ու պաշտոնեության կողմից:

Հայոց Հայրապետին դիմավորում են նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Պետք է նշել, որ հովիւսական ճամն այցելությունները, տրված մեր ներքին թեմերին, հանդիսանում են պատմական ու հոգևոր նշանակություն ունեցող իրադարձություններ՝ ամրապնդելով միաժամանակ եղբայրական կապը մայր հայրենիքի և եղբայրական մշտն հանրապետությունների մեջ ապրող մեր հավատացյալների ու ժողովուրդների միջև:

Այս ոգով ադրբեջանական և հայ տեղական մամուլը լայնորեն արձագանքեցին Հայոց Հայրապետի այցելությունը Բաքու՝ նշելով այդ առթիվ կազմակերպված հանդիսություններն ու պաշտոնական ընդունելությունները:





**«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
25-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**

Հանդիսավոր և պատարագ և քարոզ

Այս տարի հունվարին լրացավ «Էջմիածին» ամսագրի հրատարակության 25-ամյակը:

Հունիսի 1-ին, կիրակի օրը, այս հիշարժան տարեվրի առիթով, Մայր տաճարում մատուցվում է հանդիսավոր և պատարագ: Պատարագում է հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

Վեհափառ Հայրապետը ժամը 12-ին, եկեղեցական թափորով, առաջնորդվում է Մայր տաճար և, «Հայր մեր»-ից առաջ, ոգեշունչ քարոզով ոգեկոչում է հիշատակել լուսաբոգի Ս. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի, որի նախաձեռնությամբ և ջանքերով 1944 թվականի հունվարին սկսվում է Մայր Աթոռի երկրորդ պաշտոնաթերթի հրատարակությունը:

Ն. Ս. Օծությունը այնուհետև իր քարոզում հանգամանորեն ներկայացնում է Գեվորգ Զ-ի կյանքը, նրա եկեղեցաշեն, մշակութային, կրթական, հայրենամարտի ու խաղաղասիրական ուսանելի գործունեությունը և ապա կանգ է առնում «Էջմիածին» ամսագրի 25 տարիների ընթացքում կատարած եկեղեցական-կրոնական, հայագիտական և հայրենասիրական մեծ դերի և առաքելության վրա, ոգեկոչելով նաև հիշատակը ամսագրի հրատարակության իրենց աշխա-

տակցության բաժինը բերած Մայր Աթոռի միաբանության անդամների և մտավորականության:

Հոգեհանգիստ

Հավարտ և պատարագի **Վեհափառ Հայրապետը** եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճարի գավթում, զանգակատան հարավային կողմում, հանգուցյալ Հայրապետների շարքում, երջանկափառակ Ս. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի շիրիմը, որի վրա Ն. Ս. Օծության հանդիսադրությամբ և ի ներկայության հոծ բազմության կատարվում է հոգեհանգստյան մասնավոր կարգ:

Հոգեհանգստյան Ավետարանի ընթերցումից հետո, Հայոց Հայրապետը արտասանում է «Քրիստոս Որդի Աստուծոյ» աղոթքը և ոգեկոչում մի անգամ ևս հիշատակել հայ մշակույթի մեծ երախտավորների՝ Ս. Տ. Գեվորգ Զ կաթողիկոսի, Մայր Աթոռի միաբանության, հոգևոր ճեմարանի դասախոսների և այն հոգևորական և աշխարհական մտավորականների, որոնք իրենց ծառայության բաժինն են բերել սիրով և նվիրումով «Էջմիածին» ամսագրի աշխատակցության միջոցով հայ եկեղեցու պայծառությանը և հայ մշակույթի զարգացմանը:

**Հանդիսավոր նիստ Վեհարանում՝
նվիրված «Էջմիածին» ամսագրի
25-ամյակին**

Հունիսի 1-ին, կիրակի օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանի հանդիսությանը ջահագարդ ու շքեղ դահլիճում **Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի** բարձր նազադարձության ներքո տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված «Էջմիածին» ամսագրի հրատարակության 25-ամյակին:

Որոշյալ ժամին նախագահական պատվո սեղանի շուրջ տեղ են գրավում **Վեհափառ Հայրապետը,** լուսարարապետ **տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը,** Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և «Էջմիածին» ամսագրի առաջին խմբագիր, **պրոֆ. Առաքել Առաքելյանը,** հոգևոր ճեմարանի տեսուչ **տ. Ներսես Ծ. վրդ. Պողապալյանը,** ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող ամերիկահայ դոկտ. **Հակոբ Ներսիսյանը** և «Էջմիածին» ամսագրի խմբագիր **Արթուր Հատիսյանը:**

Նախագահական սեղանի շուրջ տեղ են գրավել նաև՝ ՀՍՍՀ Միևիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Կ. Դավթաթյանը** և Նաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի ընդհանուր քարտուղար **տիկին Հեղուշ Խաչատրյանը:**

Հանդիսությանը ներկա են շուրջ 300 հրավիրյալներ, այդ թվում՝ Գերագույն հոգեվոր խորհրդի և միաբանության, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը, մտավորականներ, թղթակիցներ և այլ հրավիրյալներ:

Հանդիսավոր նիստը բացվում է Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագով, որին հաջորդում է հոգևոր ճեմարանի երգչախումբի «Որք զարդարեցին տնօրինաբար» շարականի կատարումը:

Այնուհետև հանդիսության բացման խոսքով հանդես է գալիս Մայր տաճարի լուսարարապետ **տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը,** որը ոգեկոչում է հիշատակը Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի և ապա վեր է հանում «Էջմիածին» ամսագրի կատարած եկեղեցական, մշակութային և հայրենասիրական շնորհակալ աշխատանքը, նվիրված հայ ժողովրդի հոգևոր լուսավորության, հայ մշակույթի ծաղկման և հայրենական զգացմունքի ամրապնդման, նաև որպես ոգեղեն կամուրջ ափյուրքի և մայր հայրենիքի հայության միջև:

Հանդիսությունը բաղկանում էր երկու մասից:

Առաջին մասում՝ զեկույց, ողբույցի և օրհնության խոսք, իսկ երկրորդ մասում՝ գեղարվեստական ծրագրի կատարում:

Զեկույցման համար խոսքը նախ տրվում է «Էջմիածին» ամսագրի խմբագիր **Արթուր Հատիսյանին:**

«Այս տարի հունվարին լուսավ Մայր Աթոռի երկրորդ պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի հրատարակության 25-ամյակը:

1944 թվականի հունվարին, հրատարակվում էր «Էջմիածին»-ը, որպես «պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ արքայ Էջմիածնի, հրամանաւ ազգընտիր տեղական Ամենայն Հայոց Հայրապետութեան տ. Գևորգ արքեպիսկոպոսի», ինչպես նշվել է առաջին համարի առաջին էջում:

Մայր Աթոռի առաջին պաշտոնաթերթ «Արարատ» ամսագիրը հրատարակվում էր 1868—1919 թվականներին:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից Մայր Աթոռի և հայրենի բարեխնամ կառավարության միջև կատարված բանակցությունների հիման վրա, Մայր Աթոռին իրավունք էր տրվում դեռևս 1922 թվականին հրատարակել ամսագիր, ունենալ տպարան և վերաբանալ հոգևոր ճեմարան:

Գևորգ Զ կաթողիկոսի անվան և գործունեության հետև և կապված սերտորեն Մայր Աթոռ ու Էջմիածնի՝ մեր օրերի հոգևոր վերազարթոնքի և վերակազմության մեծ և պատասխանատու աշխատանքները, և այդ թվում, պաշտոնաթերթի հրատարակությունը:

«Էջմիածին» ամսագիրը հանդիսացավ «Արարատ» ամսագրի շարունակությունը:

Գևորգ Զ-ը Գալուստ Կյուլյենկյանին գրած իր նամակում այսպես է բնութագրում «Էջմիածին» ամսագրի նպատակը հայ կյանքում. «Ամսագիրը արձագանքում է թե՛ հայրենի երկրի և թե՛ Սովետական Միության մեջ տեղի ունեցող բոլոր կարևոր երեվոյթներին: Արձագանքում և լուսաբանում է ափյուրքի հայության ընդհանուր կյանքի երևույթները: Տալիս է բնաշխարհի և ափյուրքի հայության և ընդհանրապես քույր եկեղեցիների եկեղեցական կյանքի կարևոր երևույթների նկարագիրն ու լուսաբանությունը: Նա արծարծում է Հայ երկրի, Սովետական Միության և եվրոպական գրականության աչքի ընկնող խնդիրները, բնորոշելով նոցա անթերս կողմերը և տալով գրական դեմքերի գնահատականները: Ամսագիրը հրատարակում է հայ հին մատենագրական նորություններ՝ տալով նոցա ուսումնասիրությունը, այլև սովետական նոր գրական երկերի գրախոսականները: Նա տալիս է հայրենադարձ ժողովրդի կյանքի

տնտեսական նկարագիրը հայրենի երկրում, նորա տնտեսական և հոգեկան վիճակը և նորա վերելքը բոլոր ապարեզներում: Նա ծանոթացնում է հայությանը իր դեկավարող սկզբունքների հետ և համայն հայությանը կապում է իր միջոցով հայրենիքի և հայրենի ժողովրդի հետ: Ամսագիրը արձագանքում է նաև համամարդկային բնույթ կրող կարե-վորագույն հարցերին, որպիսին է համաշխարհային խաղաղության և ազգերի ու պետությունների համագործակցության և եղբայրության հարցերը: Այսպիսի թերթի գոյության անհրաժեշտությունը, ընդհանուր ամամար և մանավանդ սփյուռքի հայության համար ինքնին հասկանալի է, որի ապացույցը հայրենի երկրի և սփյուռքի հայության դրական վերաբերմունքն է»:

«Էջմիածին» ամսագրի Ա համարի առաջին էջում ազգընտիր տեղակալը «Հայ եկեղեցու պարտքը իր ժողովրդի հանդեպ» առաջնորդող հոդվածում գրում էր.

«Հայ եկեղեցին որպես արթուն հովիվ դարձրեք շարունակ պաշտպանել է իր ժողովրդի պայքարն օտար բռնակալների տիրապետության դեմ, օրհնել է հայ ժողովրդի դիմակալության ոգին, ներշնչել է ազգային անկախության գաղափարը, մշակել է ազգային ինքնագիտակցության զգացումը:

Հայ անձնավեր հոգևորականներ՝ Մեծն Ներսես, Ղևոնդ Երեց և ուրիշներ, պայքարի ժամին խաչն ու Ավետարանը ձեռքներին դեպի հաղթություն են առաջնորդել հայ զորքին»:

Խաղաղ կյանքի տարիներին ևս հայ եկեղեցականներ իրենց նվիրել են «եկեղեցու պայծառացմանը, հիմնել են վանքեր, նրանց կից դպրոցներ, գրի են առել հայ ժողովրդի պատմությունը, հարստացրել եկեղեցական գրականությունը, ճոխացրել հոգևոր տաղերգությունը:

Հայ եկեղեցին իր ժողովրդի նկատմամբ ունեցած սիրո և հոգատար վերաբերմունքի ցայտուն օրինակներ ցուցաբերեց նաև Հայրենական պատերազմում, հավատարիմ նախնայաց պալանդներին: Հայրենի երկրի և սփյուռքի հայ ժողովուրդ, եթե իբրև հայ մարդ և իբրև հայ ազգ ապրել կուզես, դիր քո ձգտումներն ու հույսերը մեր հայրենիքի ու Հայրապետական Աթոռի առաջ, հավատալով, որ նրանք են արտիդ սրբությունների և իղձերի պահապանն ու կատարողը:

Հայը, բացի Սովետական Հայաստանից, չունի այլ հայրենիք, հայը Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կոչման, բաց եթե հայ եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը՝ ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռով» (1941 հուլիս 30, կոնդակ):

Արդարև, հայ եկեղեցու և հայ ժողովրդի գոյության, հավերժության արմատներն ու ապագան գտնվում են այստեղ, ս. Էջմիածնի հազարամյա խորհրդի և վերածնած հայրենի հողի վրա:

Ամսագրի հիմնական, կարևոր և առաջին խնդիրներից մեկը եղավ 1945 թվականի հունիսի 16-ին Մայր Աթոռում ազգային-եկեղեցական ժողովի գումարումը, հայրապետական ընտրության, օծման հանդիսությունների կազմակերպումը, որոնք լայնորեն արձանագրվեցին ամսագրի էջերում:

1945 թվականի հունիսի 16-ին Մայր Աթոռ ս. Էջմիածնում գումարվեց ազգային-եկեղեցական ժողով, զբաղվելու առանձնապես կաթողիկոսական ընտրության հարցով, և ընդհանրապես՝ մեր եկեղեցու վերաբերյալ մի շարք այժմեական և հրատապ հարցերով:

«Հայ եկեղեցին ցարդ բարոյական տեսակետով միասնական էր,—գրում է ամսագրում՝ նորընտիր կաթողիկոսը,—այսօր տեսա համերաշխության ոգին վերադարձած մեր մեջ»:

Պատգամավորներին Մայր Աթոռ էին բերել ոչ միայն եկեղեցասիրության, այլ նաև հայրենաքաղաքության զգացմունքները:

Ամսագիրը 1945 թվականի հունիսից սկսած բազմաթիվ էջեր է նվիրել պատգամավորների տպավորություններին, հուշերին, հարեմական ապրումներին:

Ամսագիրը դարձավ առաջինը, որը սփյուռքի և հայրենիքի միջև ստեղծեց սիրո, համագործակցության ոգեշունչ ու կենդանի կամուրջ, անքակտելի միություն՝ մրկավ բաժանված հայության երկու մեծ հատվածների միջև:

«Էջմիածին» ամսագրում տպագրվեցին մեծագործ Հայրապետի 56 կոնդակներ, քարոզներ, ճառեր, որոնք մեր ժամանակի եկեղեցական մատենագրության մարգարիտներն են, գաղափարական բովանդակության և արտահայտչական ձևերի գեղեցկության տեսակետներից, և որոնց մեջ նա դրել էր իր հավատալիքի ոգին, հայրենասեր սիրտը, նվիրական ու համամարդկային վեհ մտքերը: Այդ կոնդակներում միաժամանակ շոշափված-լուսաբանված են պայծառությամբ, հայրապետական հատուկ հեղինակությամբ և իմաստությամբ մեր ազգային-եկեղեցական կյանքի մեծ իրադարձությունները, ժամանակակից հարցեր: Առաջին համազգային, պատմական ճշմանկություն ունեցող հարցը, որի վրա լայնորեն կանգ է առնում ամսագիրը, դա ներգաղթի հարցն է: Ամսագիրը Հայոց Հայրապետի անունից ջերմորեն ողջունում էր կենտրոնական կառավարության և հայրենի բարեխնամ իշխանության

հայրենասիրական մեծ նախաձեռնությունը, պատմական որոշումը. «Դեպի երկիր, ամեն ինչ ներգաղթի համար» հայրապետական կոչով ամսագիրը դիմում էր արտասահմանի առաջնորդներին, ազգային մարմիններին և մամուլին կազմակերպելու հայ ժողովրդի ներգաղթի գործը:

«Դարձե՞ք, որդյակք իմ, դարձե՞ք տունը ձեր հայրական, ջարդեցե՞ք մեկընդմիջտ օտար ժայռերի վրա գաղթացույթը ձեր դարավոր և վերադարձե՞ք շենշող հայրենիքը մեր:

Գաղութահայությունը պետք է ունենա միայն և միայն մի սևեռակետ՝ Սովետական Հայաստան, դեպի ուր նա պետք է ուղղի իր սիրագործով հայացքը: Երևան տանող ուղին՝ դա հայ ժողովրդի դարավոր գաղթականությանը վերջ դնող ուղին է հանդիսանում: Ներգաղթի պետական որոշումը՝ դա հայ ժողովրդի փրկության մակույկն է, որ վերջապես պիտի փրկի զարհուրելի նավաբեկության մատնված հայ ժողովրդի բեկորներին: Հոգեզմայլ է սփյուռքի պատմական հայրենադարձը: Ով բացահայտ թե գաղտնի դավեր է լարում հայ սփյուռքի հայրենադարձի դեմ, նա ակամա դուրս է մնում հայ ժողովրդի ազգային-հոգևոր միասնականությունից»: Այս առթիվ ամսագիրը հրատարակում էր նաև Հայոց Հայրապետի կոնդակը ուղղված համաշխարհային հայկական կոնգրեսին՝ ազգաբնակչության և հայրենի հողերի վերամիացման, ինչպես նաև ուղերձներ՝ երեք մեծ պետությունների ղեկավարներին, հայկական հողերի Սովետական Հայաստանին կցվելու մասին:

«Էջմիածին» ամսագրի անունը սերտորեն կապված է նաև արդիականության մեծագույն հարցի՝ խաղաղության համաշխարհային շարժման և եկեղեցու ու աշխարհի միջև դիալոգի հարցի հետ:

«Էջմիածին» ամսագիրը խաղաղության շարժման ստեղծման առաջին իսկ օրերից, 1949 թվականից, իր գիտակից և դրական վերաբերմունքով է արտահայտել հոգուտ այդ շարժման:

«Մենք այսօր,—գրում է ամսագրում Գեվորգ Զ-ը,—իրավունք չունենք լռելու, երբ համայն մարդկության ապագա անվտանգությունը և խաղաղ կյանքի խոստումը ենթակա է վտանգի և հոգևած մարդկությունը կանգնած է նոր պատերազմի, նոր թշվառության առաջ... Հայաստանյայց եկեղեցին հավատարիմ իր ավանդական սկզբունքներին իր ձայնն է բարձրացնում խաղաղության օգտին:

Պատերազմ՝ նշանակում է միլիոնավոր մարդկանց մահ, շեն բաղաբների և գյուղերի կործանումն ու ավեր և մշակույթի արժե-

քավոր ստեղծագործությունների ոչնչացումն:

Խաղաղություն՝ նշանակում է ապրել, ստեղծագործել և երջանիկ կյանք վարել:

Հայ ժողովուրդը, որը պատմական անցյալում լիապես ճաշակել է պատերազմի դառնությունը, որ՝ Առաջին համաշխարհային պատերազմում մեկուկես միլիոն զոհ է տրվել և Երկրորդ հայրենական պատերազմում իր հարազատների և բազմաթիվ սիրատուն զավակների կորուստն է ողբացել, խաղաղություն է պահանջում:

Բացի հիմնական այս հարցերից, «Էջմիածին» ամսագիրը միշտ էլ իր էջերը սիրով տրամադրել է պատմական, հայագիտական, բանասիրական, եկեղեցական արվեստի, հայ եկեղեցու պատմության միլիոնավոր արժեքավոր հոդվածների հրատարակության:

Ամսագիրը դառնում է նաև հայագիտական լուրջ հրատարակություն, «Արարատ»-ի հայագիտական ավանդույթների շարունակողն ու ծառանգորդը:

Առաջին համարում գիտական արժեքներ կայացնող բովանդակալից հոդվածներ, ուսումնասիրություններ են հրատարակել Ստ. Մալխասյանը՝ «Հայերը ե՞րբ են ընդունել քրիստոնեությունը», Հր. Աճառյանը՝ «Հայ տառերի գյուտի ստույգ թավականը», Գ. Լևոնյանը՝ «Հովհաննես վարդապետ Մրգուզ», պրոֆ. Ա. Աբրահամյանը՝ «Խաչատուր երեց Կաֆայեցու տարեգրությունը»:

Այնուհետև հաջորդ համարներում ամսագրին իրենց աշխատակցությունն են քերել հայագիտական մտքի պայծառ ու վաստակավոր ներկայացուցիչներ, այդ թվում՝ բազմավաստակ գիտնական Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը, դոկտ. Երվանդ Ծախագիզը, Վարպետը՝ Ավ. Իսահակյանը, Արտավազդ արքեպ. Սյուրմեյանը, Սիրարիի Տեր-Ներսիսյանը, Ար. Ալբուհանյանը, պրոֆ. Առ. Առաքելյանը, պրոֆ. Սիմյոնովը, Արամ Երեմյանը, Հարություն Քյուրտյանը, Նորայր, Դերենիկ Եպիսկոպոսները, Մայր Աթոռի միաբաններ Ռուբեն վրդ. (ապա Եպիսկոպոս) Դրամբյանը, Եզնիկ վարդապետը, հոգևոր ճեմարանի դասախոսները, Միհաս Միմասյանը, Հովսեփ Գրիգորյանը, Վ. Բդույանը, Պատրիկը: Տարիների ընթացքում «Էջմիածին» ամսագրի շուրջ համախմբվեց այսպես հայագիտությանը զբաղվող լուրջ գիտնականների մի հույլ: Այս համատարակման մեջ կարելի չէ հանգամանորեն խոսել ամսագրում հրատարակված բանասիրական, հայագիտական, պատմա-բանասիրական, եկեղեցագիտական ուսումնասիրությունների գիտական արժեքների և կարեվորության մասին: Դա առանձին ուսում-

նասիրության հարց է, որը հավանաբար կը կատարվի հետագայում:

1868 թվականի հունվարին հրատարակվող «Արարատ»-ի Ա համարը անպաճույճ, փոքրիկ ու նիհար մի տետրակ էր, ութ էջից բաղկացած, մինչ 1944 թվականին հրատարակվող «Էջմիածին» ամսագրի Ա համարը բաղկանում էր 52 մեծադիր տպագրական էջերից, ուներ շքեղ շապիկ և տիտղոսաթերթ, գեղարվեստորեն ձևավորված նկարիչ Տարագրոսի կողմից:

«Էջմիածին» ամսագրի հրատարակությունը մշակութային ուշագրավ երևույթ է հայ լրագրության պատմության և Մայր Աթոռի ժամանակակից տարեգրության մեջ, հայրենական մշակույթի ծաղկման այս փառափայլ օրերին:

1955 թվին, հոկտեմբերին, ս. Լուսավորչի Աթոռի վրա էր բարձրանում Ս. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետը, որն Իր դեպի ս. Էջմիածինն ունեցած պաշտամունքով և իրավ հայրենասիրությամբ շարունակում էր Գեվորգ Զ-ի եկեղեցական և հայրենասիրական գործունեությունը, երիտասարդական թափով, ընդարձակ արդյունավորությամբ և իրագործումներով: Այդ գահակալությամբ մի նոր էջ էր բացվում Մայր Աթոռի ժամանակակից պատմության և հայ եկեղեցու մեր օրերի տարեգրության մեջ:

Այդ օրվանից անցել են աշխատանքի, կառուցումների, վերաշինության, հաջողությունների և դժվարությունների տասնչորս տարիներ՝ լի հոգևոր, մշակութային, եկեղեցաշեն և հայրենամարդ ոգևորիչ իրագործումներով:

Այդ սրտառույ ճիգերի, կառուցումների, հաջողությունների և դժվարությունների կենդանի օրագրությունն է հանդիսացել «Էջմիածին» ամսագիրը, հայրապետական կոնդակների, քարոզների, ելույթների, մամակների հրատարակություններով, որոնք միշտ զարդարել են ամսագրի առաջին էջերը, և որոնց միջոցով Հայոց Հայրապետը Իր խոհերն ու ապրումները, Իր հոգին ու սիրտն է բացել Իր հոգևոր զավակների առաջ, հայրապետական հեղինակությամբ, ընդհանրապես լավատեսությամբ և երբեմն էլ՝ դառնությամբ, բայց միշտ սիրով ու համբերությամբ: «Էջմիածին» ամսագիրը եղել է Հայոց արդի Հայրապետի սրտին ամենամոտ ձեռնարկը: Վազգեն Ա Հայրապետը մեր ժողովրդի քրիստոնեական և հայեցի կրոնա-քարոչական, հայրենասիրական դաստիարակության գործում մեծ և պատասխանատու դեր է հատկացրել «Էջմիածին» ամսագրին:

Ն. Ս. Օծությունն ամսագրի խմբագրության առաջ խնդիր է դրել հոգևոր սնունդ և

ազգային-հայրենասիրական իրավ գիտակցություն տալ հայ ժողովրդին, պատկերել Մայր Աթոռի, միաբանության, հոգևոր ճեմարանի կյանքը իր բոլոր կողմերով, լայն կերպով արձագանքել ներքին թեմերի և սփյուռքի ազգային-եկեղեցական կյանքին, առանձին սիրով ու գուրգուրանքով պատկերել Արարատի հովերժական մայրամբի ներքո հայրենի հողի վրա հոգևոր, մշակութային, տնտեսական իր զարթոնքը ապրող, երեկ նահատակված և այսօր հրաշափառապես հարություն առած մեր ժողովրդի կյանքը, արձագանքել միջեկեղեցական հարաբերություններին և միաժամանակ իր էջերը լայնորեն բանալ հայ եկեղեցու պատմության, եկեղեցական մատենագրության ու եկեղեցական արվեստի հետ աղերս ունեցող գիտական լուրջ հոգվածների և ուսումնասիրությունների առաջ: Մի անգամ ևս, մեր օրերին էլ, գրի և տպագրության շնորհիվ ս. Էջմիածինը դառնում էր «բացեալ աղբիւր գիտութեան Աստուծոյ» (Վորյուն): Որովհետեւ ամսագրի հրատարակությունը, Մայր Աթոռի տպարանի վերաբացումը ուղիղ շարունակությունն են մշակութային ու հայրենասիրական այն մեծ գործի, որի սկիզբը դրեցին ս. Սահակն ու ս. Մեսրոպը, տարբեր պայմանների մեջ, տարբեր ձևերով, բայց նույն վեհ նպատակի համար:

Ամսագիրը ընթանում է Վեհափառ Հայրապետի գծած ուղիով: Նա՛ է իրական խմբագրապետը:

Ն. Ս. Օծությունը հետևողականորեն և արթնամտությամբ հետևում, հսկում է ամսագրի հրատարակության վրա, որպես Մայր Աթոռի պաշտոնաթերթի, մի հանգամանք, որը բարձրացնում է պատասխանատվության զգացումը խմբագրական աշխատանքում: Ամեն մի բառ և նախադասություն անցնում է Հայոց Հայրապետի սրտի ու մտքի միջով, հասնելու համար իր ժողովրդի սրտին ու գիտակցությանը, որպես «հայրապետական հրամանա» տպված խոսք և մտածում, պատգամ և օրհնություն:

1956 թվին, հուլիսին, հայրապետական կարգադրությամբ, Մայր Աթոռում «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը իր հրատարակության 13-րդ տարում ունենում էր իր առանձին, մասնավոր խմբագրական գրասենյակը՝ 3 մնայուն աշխատակիցներով՝ խմբագիր, մեկ մեքենագրող-սրբագրիչ և մի առաքիչ: Ամսագրի տպաքանակը 2000-ից բարձրացվում է 3500-ի: Մեծ ուշադրություն էր դարձվում ամսագրի բովանդակությանը, նյութերի ընտրությանը, գեղարվեստական ձևավորմանը և տպագրության կանոնավորությանը: Ամսագրի գեղարվեստական ձևավորումը, Հայոց Հայրապետի ցուցմուն-

քով, կատարում էր ճարտ. հաղդասար Ար-
գումանյանը:

Ն. Ս. Օծությունը Իր գահակալության ա-
ռաջին իսկ օրից մտածում էր օծտել «Էջ-
միածին» ամսագրի խմբագրությունը նաև
սեփական տպարանով: Մինչև 1961 թվա-
կանը ամսագիրը տպվում էր Երևանի
տպարաններում:

Վազգեն Ա Հայրապետը հոգեկան մեծ
հրճվանքով և լավատեսությամբ գրում էր
հայրապետական Իր անդրանիկ կոնդակում.

«Մայր Աթոռի պաշտոնաթերթը պիտի
շարունակե իր դերը կատարել ի միաթա-
րություն և ի դաստիարակություն մեր հա-
վատացյալ ժողովուրդին և երբ Մեզ խոս-
տացված նվիրատվությամբ հաջողվեց Մայր
Աթոռի տպարանը հիմնել, պիտի սկսինք
հրատարակել նաև այլ պարբերականներ ու
հոգևոր-եկեղեցական գրականություն և
Մայր տաճարի զանգակները հաղթական
պիտի դողանքեն և հորիզոնե հորիզոն պի-
տի ավետեն թե՛ այստեղ կենդանի է ս.
Մեսրոպի ոգին և կանգուն՝ ս. Էջմիածինը՝
հայ ժողովուրդը լուսավորելու իր փառա-
գարդ ճամփուն վրա»:

1961 թվի հոկտեմբերին ԱՄՆ-ի հայոց
նվիրատվությամբ բացվում էր Մայր Աթոռի
տպարանը, «լույսի նոր վառարան մը մեր
եկեղեցիին և համայն հայ ժողովրդի կյան-
քին մեջ»,—գրում էր Հայոց Հայրապետը
տպարանի բացման առթիվ գրած իր կոն-
դակում, 1961 թվի հոկտեմբեր 16-ին:

Վազգեն Ա-ը գահակալեց նոր ու ավելի
նպաստավոր պայմաններում և ամսագրի ա-
ռաջ դրեց նոր ու այժմեական այլ խնդիր-
ներ:

1956-ից սկսած «Էջմիածին» ամսագիրը
ամենայն կարևորությամբ իր էջերը տրա-
մադրում էր հայրապետական արտասահ-
մանյան ուղևորությունների պատմական նը-
շանակությամբ, սփյուռքի մեր ազգային-ե-
կեղեցական կյանքի տարագրության մեջ,
որպես Ն. Ս. Օծության գահակալությունը
հատկանշող ու նշանավորող իրադարձու-
թյուն:

Ն. Ս. Օծությունը արդարև մեծ կարևորու-
թյուն է տալիս հովվապետական Իր այցե-
ություններին: Ցանկանում էր ամձամբ տա-
նել Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնություն-
ներն ու վերածնված Հայոց մայր հողի ու
ժողովրդի ողջունները սփյուռքին, ճանաչել
մեր նվիրապետական Աթոռներն ու թեմերը,
ծանոթանալ իր ժողովրդի ապրումներին,
հույսերին, մտահոգություններին, սփյուռքի
ազգային-եկեղեցական կյանքին և Իր այ-
ցելությամբ, քարոզներով միաթարել, ոգե-
վորել ու ամրապնդել կապը Մայր Աթոռի,
սփյուռքի ու հայրենիքի միջև:

Սփյուռքը Հազգ Հայրապետի բարձր
անձնավորության և հայրապետական հեղի-
նակության մեջ շոշափելիորեն մարմնացած
էր տեսնում հավերժական ս. Էջմիածինն ու
վերածնված մայր հայրենիքը և լսում պատ-
գամը մեր նախնաց: Ս. Էջմիածինը ինչպես
միշտ, այսօր ևս առավել հանդիսանում է
մեր հավատքի Մասիս սարը, բարախող
սիրտը հայ ժողովրդի, հայրենասիրության
մշտավառ օջախը և մեր ազգային իդեալ-
ների մարմնացումը:

Հայ սփյուռքը թանկագին աղամանդի
նման փշրված ու ցանված օտար հորիզոն-
ների տակ ու ենթակա տարբեր մշակույթ-
ների ազդեցության, չի կարող ապրել, եթե
չխարսխի գաղափարական ամուր հիմքերի
վրա:

Ս. Էջմիածին և մայր հայրենիք. ահա եր-
կու գաղափարականներ, երկու սրբություն-
ներ, որոնց ներշնչումով և տեսիլքով միայն
հայ սփյուռքը կարող է գոյատևել: Սփյուռքի
համար չկա այլ փրկարար ճանապարհ, եթե
ոչ բոլոր հայ հոգիների եղբայրացումն ու
միավորումը Էջմիածնի լույսին ու հայրենի-
քի վեհ զգացումին մեջ:

Մեր օրերի մեծագույն հրամայականը
մայր հայրենիքից դուրս և հեռավոր ափերի
վրա ապրող հայության ազգապահպանման
և գոյատևման հարցն է:

Ով այսօր իր հոգին չի լուսավորում՝ ս.
Էջմիածնից ճառագայթող լույսով և իր սիր-
տը չի տաքացնում վերածնած հայրենիքի
լուսավոր ապրումներով, ոչ մեկ բանով կա-
րող է ջերմանալ, հայանալ մանավանդ ու
գորանալ: Սփյուռքի հայության գիտակցու-
թյան մեջ այս մտածումը արդեն իսկ հայ-
րապետական ուղևորությունների առիթով
բյուրեղացած հավատք, ապրում ու առաջ-
նորդող ոգի է դարձել:

Ահա թե ինչո՞ւ «Էջմիածին» ամսագիրը
իր խմբագրականներում ամենայն կարևո-
րությամբ նշում էր, մեկնաբանում՝ հայրա-
պետական ուղևորությունների ազգային-
եկեղեցական, միջեկեղեցական, միջպետա-
կան նշանակությունը, երբ Հայոց Հայրապե-
տը նման առիթներով անհրաժեշտ էր հա-
մարում նաև, որպես հայ եկեղեցու գերա-
գույն պետ և գլուխ, ներկայանալ Իր այցե-
ած երկրների պետական ու հոգևոր իշխա-
նությանց ու լսել բարի վկայություններ հայ
եկեղեցու, հայ ժողովրդի բարեմասնությանց
մասին:

Մայր Աթոռ ս. Էջմիածին, այսօր է՛ և հա-
վետ պիտի ըլլա՝ ինչ որ եղած է ի սկզբանե,
այսինքն, վե՛մ հավատքի, լո՛ւյս հոգիներու
և պաշտպան հայրենյաց,—պատգամում է
ամեն տեղ Հայոց Հայրապետը:

14 տարի «Էջմիածին» ամսագիրը Հայոց

Հայրապետի սուրբ բերանով այս նվիրական ճշմարտությունն էր քարոզել ու հասցրել իր յուրաքանչյուր ընթերցողի սրտին ու գիտակցությանը:

Ամսագրի էջերից Հայոց Հայրապետը միշտ իր խոսքն ու պատգամը առաջին հերթին ուղղել է սիրով և գործով հայ եկեղեցու ուխտյալ հոգևորականությանը, շեշտելով նրա հոգևոր-պատմական, հայրենասիրական ու մարդկային առաքելության վեհությունը, կոչման հերոսական քաղցրությունն ու երանությունը:

«Ի՞նչ վսեմ և ի՞նչ գեղեցիկ է հոգևոր կոչումը քահանայական... աստվածային սիրո գործիքներ եք դուք հավատացյալներու ծոցին մեջ, ուսուցանող եք և դաստիարակ, սրբացնող և մխիթարող...»:

Հայոց Հայրապետը ամսագրում տպագրված իր ելույթներում, ճառերում հաճախ է անդրադարձել նաև այսօր աշխարհը և մարդկությունը հուզող հոգեկան, ընկերային, բարոյական հարցերին, տազանայեցող, դժվարություններին և ավետարանական ու քրիստոնեական մտածողությանը վերապահել է մեծ դեր և առաքելություն՝ աշխարհը մեր օրերում էլ վերանորոգելու իր սրտատույ ջանքերի մեջ, մարդկության երջանկության և բարօրության համար:

Մեր օրերում խաղաղության պաշտպանության հրամայականը և իրավ հայրենասիրությունը իրար լրացնող երկու լուսավոր ու ճշմարիտ սկզբունքներն են Հայոց Հայրապետի 14-ամյա գործունեության մեջ, Ավետարանի պատգամի և քրիստոնեական մտածողության լույսի մեջ պայծառացած:

«Խաղաղությունը կյանքի առողջ և ստեղծարար ուժերու ներդաշնակորեն զարգացող գոյակիճակն է արդարության լույսի տակ: Մեր օրերում երբ մարդու հանճարը թոփաք է առած նվաճելու համար նյութական տիեզերքը ամբողջ միմյն և արև՝ աղբյուրը լույսին, ինչքան հրաշալի պիտի ըլլար տեսնել հաղթանակը նույն մարդուն բարոյական հանճարին, նվաճումը արդարության և խաղաղության լույսին, որ դարեր առաջ շողաց հավատքի և հույսի բարձունքներեն, աշխարհին բերելով պատգամը Աստուծո՝ «Յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»,—գրում է Հայոց Հայրապետը:

Հայրենասեր Հայրապետը մեծ հուզումով և ապրումով ավետում է ամսագրի էջերից՝ իր գավակներին. «Այստեղ, մայր հողի վրա, վերջապես, հաջ կշինե, կստեղծե իրեն համար: Կշինե իր ներկայի ու ոսկի ապագայի համար: Այստեղ ոչինչ կկորսվի, ոչինչ կը պակսի: Ամեն ինչ կմեկտեղվի, ամեն ինչ կկուտակվի, ամեն ինչ կաճի: Եվ ինչ որ այստեղ կշինվի, այդ կմնա մեզի միայն:

Ու հայ հայրենիքի վերածննդան այս օրերում, Լուսավորչի անմար կանթեղն ալ, Արագածի կատարեն, սև ամպերեն ազատած, նոր շողակաթումով, իր շնորհները կսփռե հայոց աշխարհին և հայաստանցիներուն, նոր կյանք առած՝ լուս խորան սրբազնասուրբ Էջմիածնի օրհնությամբ:

Ոչ երազ է այլևս, և ոչ ալ պատրանք: Իրավ է, սիրելի՛ք, Մայր Հայաստանը վերածնած է այսօր, Մայր Հայաստանը խաղաղ է այսօր, Մայր Հայաստանը կապրի կենսալի, կապրի կառուցելով, կկառուցե երգելով՝ ողորմությամբ Աստուծո հարցն մերոց և աղոթքներովը Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցվո: Հայ ժողովուրդը արցունքով սերմանեց և այսօր ցնծությամբ և փառքով կհմմնե:

Ինչպես տեսնում ենք հայրապետական կոնգակներից, քարոզներից, ելույթներից կատարված այս համատոտ ծաղկաքաղի մեջ, ամեն տեղ էր Նա՛, Հայոց Հայրապետը, իր մեծ սրտով, մտքով ու խոհերով: Նրա հայրապետական նաշվածքից չի վրիպել երբեք իր ժողովրդին և եկեղեցուն վերաբերող ոչ մի ազգային ու միջեկեղեցական իրադարձություն: Նրա լայն ու խորունկ սիրտը ընդգրկել է աշխարհի բոլոր հայաբնակ վայրերը՝ Ամբիլիաս, Երուսաղեմ, Կ. Պոլիս, Եվրոպա, հեռավոր Ամերիկաներ, Մերձավոր Արևելք, Աֆրիկա, Հնդկաստան և Ավստրալիա:

Ն. Ս. Օծության օրով «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը դառնում է նաև Մայր Աթոռի հրատարակչականը, ի պաշտոնե և ի կոչմանե:

Խմբագրության հսկողությամբ է հրատարակվում ամեն տարի Մայր Աթոռի տարեկան օրացույցը (14 մամուլ): Խմբագրությունն է հրատարակել նաև հետևյալ աշխատությունները.

1. 1956 թվականին արտասահման հայրապետական Ա ուղևորության գիրքը, 24 հրատարակչական մամուլ, պատկերազարդ, 332 էջ.

Ունեցավ երկրորդ տպագրություն Բեյրութում:

2. 1958 թվականին վեհափառ Հայրապետի ծննդյան 50-ամյակի առթիվ «Վազգեն Ա Հայրապետ Հայոց», գիրք Ա, 29 հրատարակչական մամուլ, 402 էջ.

3. 1960 թվականին «Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի երկրորդ ուղևորություն»-ը, 28 հրատարակչական մամուլ, 325 էջ.

4. 1960 թվականին «Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը պատմության լույսի տակ, համառոտ ակնարկ», 120 մեծադիր էջ.

5. 1961 թվականին Վազգեն կաթողիկոս, «Հոգեբանության դասագիրք», 8 մամուլ, 110 էջ.

6. 1962 թվականին «Էջմիածին» արքովը, հայերեն և անգլերեն լեզուներով, շուրջ 50 մլար, 8 մամուլ.

7. Արտասահմանյան Գ, Դ, Ե, Զ և Է ուղևորության բացառիկները, կամ միացյալ համարները՝ առանձնատիպերով.

8. 1966 թվականին Հ. Ծ. Սիրունու «Հայ եկեղեցին ուսման հողի վրա. Նիկոլա Յորգա», 17 մամուլ, 266 էջ.

9. 1968 թվականին Վեհափառ Հայրապետի ծննդյան 80-ամյակի առթիվ հայրապետական կոնգրեսների, քարոզների, ճառերի, նամակների հատընտիրը՝ «Վազգեն Ա Հայրապետ Հայոց», Բ գիրք, 24 հրատարակչական մամուլ, 818 էջ:

Խմբագրությունը պատրաստել է, և այժմ մամուլի տակ են.

ա) ուղևորության 8-րդ գիրքը, 26 հրատարակչական մամուլ,

բ) Նոր Կտակարանի թարգմանություն. Չորս Ավետարանների և «Գործք առաքելոց»-ի աշխարհաբար թարգմանությունը, 20 հրատարակչական մամուլ.

գ) «Էջմիածին» արքով, Բ հրատարակություն, բարեփոխված, հայ-ուս-անգլերեն լեզուներով, շուրջ 100 մլար, 8 մամուլ:

Մասնավոր կարևորությամբ պետք է նշել «Էջմիածին» ամսագրի հրատարակած 15 բացառիկ համարները, եկեղեցական, ազգային մեծ տոների և համազգային հոբելյանների առիթով:

1. 1955 թվականին հոկտեմբեր-դեկտեմբեր համարները ազգային-եկեղեցական ժողովի գումարման, կաթողիկոսական ընտրության, օծման, գահակալության և առաջին մյուռնոսոփոնության հանդիսությանը նվիրված բացառիկը, պատկերազարդ.

2. 1958 թվականին Վեհափառ Հայրապետի ծննդյան 50-ամյակի հանդիսությանը նվիրված բացառիկը.

3. 1962 թվականին ս. Մեսրոպի ծննդյան 1600-ամյակին նվիրված բացառիկը.

4. 1962 թվականին ազգային-եկեղեցական ժողովի գումարման և երկրորդ մյուռնոսոփոնության հանդիսությանը նվիրված բացառիկը.

5. 1965 թվականին Ապրիլյան եղեռնի 50-ամյակին նվիրված բացառիկը, 200 մեծադիր էջ ամսագրի.

6. 1965 թվականին Վեհափառ Հայրապետի գահակալության 10-ամյակի հանդիսության և Ապրիլյան եղեռնի հուշարձանի բացման նվիրված բացառիկը.

7. 1966 թվականին Ոսկանյան Աստվածաշնչի տղապարտության 300-ամյակին նվիրված բացառիկը, 250 մեծադիր էջ ամսագրի.

8. 1967 թվականին Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին և հայ ժողովրդի ազգային վերածնության 46-ամյակին նվիրված բացառիկը.

9. 1968 թվականին Մարդարաբադի հերոսամարտի 50-ամյակին նվիրված բացառիկը.

10. Նույն թվականին Սանահին և Հաղպատ վանքերի հիմնադրության 1000-ամյակին նվիրված բացառիկը.

11. 1968 թվականին Վեհափառ Հայրապետի արտասահման կատարած 8-րդ ուղևորությանը նվիրված բացառիկը.

12. 1968 թվականին «Արարատ» ամսագրի հրատարակության 100-ամյակին նվիրված բացառիկը 120 մեծադիր էջ և «Արարատ»-ի նյութերի մատենագիտություն, 80 մամուլ.

13. Երևանի 2750-ամյակին նվիրված բացառիկը. Այս տարի նախատեսված են բացառիկ համարներ նվիրել.

1. Հովհաննես Թումանյանի և անմահ Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակին.

2. Հայոց Հայրապետի ծննդյան 80-ամյակին, եպիսկոպոսական ժողովի հրավիրման և երրորդ մյուռնոսոփոնության հանդիսության:

Պետք է նշել նաև հայրապետական մի շարք կոնգրեսների առանձին գեղարվեստական շքեղ ու ճաշակավոր ձևավորմամբ հրատարակությունը, օրինակ.

Հայրապետական Ա կոնգրակ. Ս. Մեսրոպի ծննդյան հազարվեցհարյուրամյակի կոնգրակ.

Ապրիլյան եղեռնի հիմնամյակի կոնգրակ. Աստվածաշնչի 300-ամյակի կոնգրակ.

Կոմիտասի ծննդյան 100-ամյակի կոնգրակ և այլն:

Հայրապետական կոնգրակների գեղարվեստական ձևավորումը կատարեցին ճարտ. Բ. Արզումանյանը և նկարիչ Գ. Խանջյանը:

Վազգեն Ա Հայրապետի օրով «Էջմիածին» ամսագրին իրենց թանկագին աշխատակցությունն են բերել Մայր Աթոռի միաբաններ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, տ. Կոմիտաս, տ. Պարգև, տ. Հուսիկ, տ. վահան եպիսկոպոսները, տ. Ներսես Տ., տ. Արսեն, տ. Նարեկ, տ. Գևորգ վարդապետները, Վարպետը՝ Մարտիրոս Սարյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, պրոֆ. Ա. Առաքելյանը, պրոֆ. Ա. Դարիբյանը, Գր. Հակոբյանը, Արտ. Տիրացյանը, Ս. Մելիքեթյանը, Հովհ. Թովմազյանը, հոգեվոր ճեմարանի դասախոսներ Գր. Գյուլյանը, Պ. Ծախաբյանը, Ս. Անդրյանը, Մայր Աթոռին առնչվող ճարտարապետական հանձնաժողովի անդամներ պրոֆ. Կ. Ղաֆադարյանը, պրոֆ. Վ. Հարությունյանը, Ռ. Իսրայելյանը, գիտության, արվեստի ներկայացուցիչներ, պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանը, պրոֆ. Եր. Տեր-Մինասյանը, պրոֆ. Վ. Առաքելյանը, Հմ. Հարությունյանը, Խաչատուր Կանայանը, Հարություն Թորջյանը, Հովհաննես Եղիազարյանը, Գեղամ Սարգսյանը, Ա. Սահիգյանը, պրոֆ. Լևոն Մելիքեթ-Բեկը, Մարիետա Ծախիգյանը, Կոստան Զարյանը, Զ. Սյուրմեյանը, Համաստեղը, Արամ Հայկազը, Վահե Հայկը, պրոֆ. Ռ. Աթաբեկյանը, Ալ. Հարությունյանը,

Օհան Դուրյանը՝ յուրաքանչյուրն իր մասնագիտության գծով:

Այստեղ առանձին կարևորությամբ պետք է նշեմ Մատենադարանի տարեց և երիտասարդ ու խոստումնալից մի խումբ մտավորականների աշխատակցությունը, հատկապես Ապրիլյան եղեռնի 50-ամյակի, Ոսկանյան Աստվածաշնչի 800-ամյակի, մեծ Հոկտեմբերի 50-ամյակի առթիվ մեր հրատարակած բացառիկներին: Բոլորն էլ սիրված ու ճանաչված մտավորականներ, ինչպիսիք են պրոֆ. Ասատուր Մնացականյանը, պրոֆ. Գ. Աբգարյանը, պրոֆ. Հակոբ Անասյանը, Ս. Քոլանջյանը, Ծահնագարյանը, Օ. Եզանյանը, Ն. Թահմիզյանը, Հ. Մելքոնյանը, Ս. Տեր-Ղևոնդյանը, Ն. Բարթիկյանը, Ա. Մաթևոսյանը, Պ. Մուրադյանը և այլ մտավորականներ, Ռաֆիկ Իշխանյանը, Խաչիկ Սամվելյանը, Գևորգ Մարոյանը, Նշան Մուրադյանը, Գոհար Ազնավուրյանը, Նիկեղ Ոսկանյանը, Բնարիկ Կորկոտյանը:

Այստեղ շնորհակալությամբ և երախտագիտությամբ պետք է նշեմ նաև սփյուռքահայ ծանոթ և բազմավաստակ մտավորական պրոֆ. Հ. Ժ. Սիրունու մնալուն աշխատակցությունը ամսագրին, 1960 թվականից սկսած, պատմա-բանասիրական բովանդակալից ուսումնասիրություններով, ավելի քան 70 հեղինակային մամուլի ծավալով: Մայիսի համարում ավարտեցինք Սիրունու «Կոմիտասին հետ» հուշագրությունը, հայ երաժշտության Նարեկացու ծննդյան 100-ամյակի առիթով, գրված մեծ սիրով ու պաշտամունքով, շուրջ 20 մամուլի ծավալով:

1965 թվականին, հայրապետական բարեհաճ կարգադրությամբ, «Էջմիածին» ամսագրի խմբագրին օգնելու համար կազմվեց խմբագրական մի մարմին, Մայր Աթոռի միաբաններից, հոգևոր ճեմարանի դասախոսներից և այլ ծանոթ մտավորականներից բաղկացած: Խմբագրական մարմնի անդամներ են եղել Վահան Եպիսկոպոսը, Արսեն Վարդապետը և Ս. Մելիքսեթյանը:

Այժմ խմբագրության մարմնի անդամներն են Հովհաննես քհն. Մարությանը՝ դասախոս հոգևոր ճեմարանի, պատմական գիտությունների թեկնածու Սուրեն Քոլանջյանը, 1965 թվականից սկսած, բանասիրական գիտությունների թեկնածու և հոգևոր ճեմարանի դասախոս Ս. Անթոսյանը և ամսագրի աշխատակից Ա. Սահակյանը:

«Էջմիածին» ամսագրի հրատարակության 25-ամյակին նվիրված սույն զեկուցումը ավարտելուց առաջ, այս հանդիսավոր առիթով, օրհնաբեր ներկայությանը Հայոց Հայրապետի, սրտագին պարտականությունը ունեմ մի շարք երախտագիտական և շնորհակալական խոսքեր ասելու որպես խմբագիր:

Մեր երախտագիտության ու որդիական խորը հարգանքի առաջին խոսքը պարտինք ուղղել լուսաբնակ Տ. Տ. Գևորգ Զ մեծագործ Հայրապետի հիշատակին, որը եղավ համագային ու դարավոր այս հաստատության մեր օրերի վերագարթոնքի ու վերակենդանության իմաստուն ու հավատավոր ճարտարապետը, առաքելատիպ վերանորոգիչը, օժտված պայծառ իմացականությամբ, գործնական ձեռներեցությամբ, անձնագործ նվիրումով: 1945 թվականին ազգային-եկեղեցական ժողովում կարդացած իր զեկուցագրում նա նշում էր, որ 1943 թվին Մայր Աթոռում մնացել էին որպես միաբան ինքը և մի վարդապետ: Ժեմարանը փակվել էր 1917 թվականին: Միաբաններից շատերը մահացել էին: Գևորգ Զ-ը փաստորեն սկսում էր իր գործը «ոչնչից», բայց հավատքով ու տեսիլքով: Նա գահակալեց ու գործեց մեր եկեղեցու, ժողովրդի և հայրենիքի կյանքում պատմական նշանակություն ունեցող վճռական ու բացառիկ իրադարձություններով հարուստ շրջանում և հանդիսացավ ստեղծված նոր կացության նոր և հազվագյուտ ղեկավարը և Մայր Աթոռը դրավ իր պատմական առաքելության բարձրության վրա, որպես մեր ժողովրդի ուխտի տապանակի, որպես բովանդակ հայության ազգային-եկեղեցական ու հոգևոր կյանքի կենտրոնաձիգ ուժի:

Երախտագիտության ու շնորհակալության մեր երկրորդ խոսքը պարտինք ուղղել, ի դեմս ՀՍՍՀ Միևնախորհրդի սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդին, հայրենի հարազատ ու բարեխնամ կառավարությանը, որի օրինական, իրավական և գործնական օգնությամբ հրատարակվում էր «Էջմիածին»-ը:

Սրտագին շնորհակալության խոսք ունենք նաև ամսագրի նախկին խմբագիրներին ուղղյալ:

1944—1955 թվականներին «Էջմիածին» ամսագիրը ունեցել է երեք խմբագիր:

Ամսագրի առաջին խմբագիրն է եղել մեր սիրելի և հարգելի պրոֆ. Ա. Առաքելյանը, նախկին Գևորգյան ճեմարանի սան, որը այնքան ձեռնհաստեղծ ու մեծ արդյունավորությամբ խմբագրել է ամսագիրը 1944—1948, ապա 1955—56 թվականներին 6 ամիս և միաժամանակ որպես հոգևոր ճեմարանի դասախոս ու այնուհետև նաև Գերագույն հոգևոր խորհրդի անդամ իր սրտագին անշակցություն և բերել Մայր Աթոռի եկեղեցական-մշակութային, կրթական-դաստիարակչական, կազմակերպչական աշխատանքներին:

տանքներին, Գևորգ Զ և Վազգեն Ա կաթողիկոսների օրով:

Ամսագրի երկրորդ խմբագիրն է եղել ազնիվ մի մտավորական՝ Լևոն Կիսիբեկյանը, 1948—1950 թվականներին:

Ամսագրի երրորդ խմբագիրն է եղել ծանոթ գիտնական, պրոֆ. Աշոտ Աբրահամյանը, 1950—1955 թվականներին: Պրոֆ. Ա. Աբրահամյանի անունը նույնպես կապված է Մայր Աթոռի պատմության հետ, 1943 թվականից սկսած, երբ նա որպես Գերագույն հոգևոր խորհրդի գիտքարտուղար այցելեց Մերձավոր Արևելքի մի շարք երկրներ՝ որպես Ամենայն Հայոց Հայրապետության նկիրակ, և եղավ նորաբաց հոգևոր ճեմարանի առաջին դասախոսներից և ապա խմբագիր ամսագրի:

1956 թվականից մինչև այսօր, Վազգեն Ա Հայրապետի գահակալության առաջին օրերից, «Էջմիածին» ամսագիրը խմբագրել է Ա. Հատիսյանը, որի աշխատակցությունը սակայն ամսագրին սկսվել է 1952 թվականից, որպես խմբագրի տեղակալ:

Մասնավոր և անկեղծ շնորհակալության խոսք ունեն նաև Մայր Աթոռի տպարանի տեսուչ Մուկոչ Մինասյանի, ամսագրի տեխնիկական խմբագիր Հ. Մկրտչյանի և տպարանի ողջ աշխատակիցներին ուղղված, որոնք մեծ սիրով և ուշադրությամբ կատարել են միշտ Ամենայն Հայոց Հայրապետի, Մայր Աթոռի տպագրական բոլոր հանձնարարությունները և առաջին հերթին՝ «Էջմիածին» ամսագրի հրատարակության գործը:

«Էջմիածին» ամսագրի հրատարակության 25-ամյակի առթիվ մեր ամենախոնարհ ու որդիական հարգանքն ու երախտագիտությունը մի անգամ ևս ներկայացնում ենք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ու կրկնում մեր հավատարմության ու ծառայության մեր ուխտը՝ Իր բարձր ղեկավարության և օրհնության ներքո շարունակելու մեր էլ համեստ սպասը՝ ի նպաստ մեր մշակույթի, ի պայծառություն Մայր Աթոռ ու Էջմիածնի է ի մխիթարություն Հայոց Հայրապետի:

«Զֆոյս ի քոյոց քեզ մատուցանեմք» Հայոց արի և բարի Հայրապետ:

Օրհնի՛ր մեզ ու մեր աշխատանքը հաջորդ տարիներում է՛լ ավելի արդյունավետ, է՛լ ավելի օգտակար ծառայության համար, մեր Մայր եկեղեցուն, մեր հավատքի սրբությունը սրբոց Մայր Աթոռ ու Էջմիածնին ու վերածնած մեր մայր երկրի ու ժողովրդի փառքի ու բարօրության համար:

Այնուհետև ողջույնի խոսքով հանդես են գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես Ծ. վրդ. Պողոսպալյանը, «Էջմիածին» ամսագրի նախկին խմբագիրներ պրոֆ. Առ.

Առաքելյանը՝ նաև հանուն Գերագույն հոգևոր խորհրդի, պրոֆ. Աշ. Աբրահամյանը, հանուն Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր արխիվային վարչության՝ պետական կենտրոնական պատմական արխիվի դիրեկտոր Գրիգոր Հարությունյանը:

Հանդիսության ժամանակ «Էջմիածին» ամսագրի 25-ամյակի առթիվ ողջույնի խոսքով հանդես է գալիս նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող ամերիկահայ ծանոթ մտավորական դոկտ. Հակոբ Ներսիսյանը: Նա ասում է.

«Վեհափառ Տեր,

Երեք շաբաթներ ի վեր Ձեր սիրալի հրավերով, տիկնոջս հետ կգտնվիմ Մայր Աթոռի հովանիին տակ և մայր հայրենիքին հողի վրա որպես ուխտավոր:

Կարիք չկա ըսելու թե որպիսի հուզմունք և հրճվանքով աղոթեցիք և մեր ուխտը կատարեցիք ու Էջմիածնի տաճարին նկիրական կամարներու ներքև և երանությամբ դիտեցիք հավերժական Մասիսն ու անոր նալվածքին տակ նոր կյանքի կոչված մեր ժողովուրդը:

Մեր ուխտավորության այս օրերուն ավելի սերտ կերպով քան երբեք հաղորդվեցանք մեր նախնիքներու հավատքին և զգացիք շունչը ամեն քայլափոխի հայոց նոր պատմությունը ստեղծող մշակույթի, արվեստի և գիտության մեր տիտաններուն:

Այսօր մեր ուրախությունը կրկնապատկված է երբ Ձեր շնորհաբեր ներկալության կմանակցիք «Էջմիածին» ամսագրի հրատարակության 25-ամյակի հանդիսության:

Դեռ Մայր Աթոռ ոտք չկոխած «Էջմիածին» ամսագրի խմբագիր և իմ բարեկամ պ. Հատիսյանին ուղղված նամակիս մեջ արտագին ցանկություն կհայտնեի ներկա ըլլալ այստեղ այսօր այս հանդեսին, մեր որդիական ակնածանքը բերելու ամսագրի հիմնադիր լուսաբանակ Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի հիշատակին, ինչպես նաև մեր հարգանքի արտագին տուրքը և մեր բարեմաղթությունները ներկայացնելու ազգիս այս նոր օրերու Վեհափառ Հայրապետին, որ Իր եկեղեցանվեր գործունեությամբ, և Իր բազմակողմանի հմտությամբ մասնավորաբար, կվայելե խոր հարգանքը և որդիական հավատարմությունը ամերիկահայ բովանդակ ժողովուրդին և ի մասնավորի ամերիկահայ մտավորակներուն:

Մենք բարձր կգնահատենք «Էջմիածին» ամսագրի կատարած առաքելությունը և դերը և նշած ենք որ անոր բովանդակությունը տարվե-տարի կդառնա լուրջ եկեղեցագիտական և հայագիտական:

Գիտեք ամենքդ ալ, որ ամերիկահայ նոր սերունդը կշանա ինքզինքը հայ պանել մեր

ազգային ավանդությանց ծիրին մեջ: Բայց տեղական պայմաններու քերումով շատ քիչեր միայն կրնան հետևիլ «Էջմիածին» ամսագրի նման լուրջ և բովանդակալից հրատարակության հոգվածներուն, հայերեն լեզվով:

Վեհափառ Տե՛ր, Դուք արդեն իսկ մտածած եք ինչպես ես գիտեմ և ողջունելի մտածումը ունեցած եք, տարին գոնե 3—4 համար անգլերեն լեզվով ալ հրատարակել ամսագիրը՝ խտացնելով անոր հոգվածները, եթե կարելի է, մասնավորաբար Մայր Աթոռի կյանքին և հայրենիքի մշակութային նվաճումներու մասին լուրերու բաժինով: Այդ ձևով օգտակար եղած կըլլանք ոչ միայն սփյուռքի անգլիախոս նոր հայ սերունդին, տալով անոր Մայր Աթոռի հավերժ կենսունակության հավաստիքը, այլ նաև քույր եկեղեցիներու հետ ալ հարաբերության մեջ մտած կըլլանք մեր ժամանակը հատկանշող էկումենիկ ոգիով: Այսպիսով սփյուռքի մեր նոր սերունդը կմնա հավատարիմ իր հայրերու հավատքին, հայրենասիրական ոգիին և մյուս կողմե քույր եկեղեցիներու հոգևոր պետեր՝ և ղեկավար անձինք ավելի լավ կը ճանչնան հայ եկեղեցին, անոր ճշմարիտ պատմությունը և ավելի լավ կգիտակցին, որ մեկ է հայ եկեղեցին, մեկ է անոր նվիրապետությունը Մայր Աթոռ ա. Էջմիածնի գլխավորությամբ և օրհնությամբ:

Այս առթիվ կուզեի ավելցնել նաև, որ երջանկությունը ունեցա ճանչնալու Մայր Աթոռի նոր միաբանությունը. այցելեցի հոգևոր ճեմարան. ուխտի գացի Վաղարշապատի մեջ թե՛ այլ տեղեր ուրիշ սրբավայրեր. այցելեցի հայրենիքի պատմական հին ու նոր հուշարձանները, գեղեցիկ ու տեսարժան վայրերը ու ամեն տեղ գտա մեր ազնվապաճեն շա՛տ ավելին:

Մասնավորաբար տպավորված եմ հոգևոր ճեմարանի ուսումնա-դաստիարակչական մակարդակով, ինչ որ անհրաժեշտ սլալման է, եթե մեր եկեղեցին պիտի ընթանա արդիական աշխարհի պահանջներու համաձայն և պիտի կատարե իր առաքելությունը մեր ժողովուրդի ծոցին մեջ նաև մեր օրերուն:

Կրկին որդիական երախտագիտություն և համբույր, հայրապետական Ձեր սուրբ Աջույն և բյուր շնորհակալություն մեզի ցույց տրված հյուրասիրության և ուշադրության համար:

Պիտի մեկնինք մեր մեջ պահելով անմոռաց հիշատակը որպես մասունք և օրհնություն այս սուրբ տեղերուն:

Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի ընդհանուր քարտուղար տիկին Լ. Խաչատրյանը իր ողջույնի

խոսքի մեջ հայտնում է, որ «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանը և խմբագրությունը պարգևատրվել են Սովետական Միության Խաղաղության պաշտպանության Կենտրոնական կոմիտեի կողմից պատվոգրերով՝ 25-ամյա հայրենասիրական և խաղաղասիրական գործունեության համար:

«Էջմիածին» ամսագրի հրատարակության 25-ամյակին նվիրված հանդիսության Ա բաժինը եզրափակվում է հայրապետական օրհնության խոսքով:

Ն. Ս. Օծությունը մի անգամ ևս ոգեկոչում է հիշատակը Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի, որը եղավ համազգային ու դարավոր այս մեծ հաստատության մեր օրերի վերագարթո՞ւքի և վերականգնության հավատավոր ու իմաստուն մեծ ճարտարապետը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Իր բարձր գնահատությանն ու օրհնությանն է արժանացնում «Էջմիածին» ամսագրի նախկին խմբագիրների՝ պրոֆ. Առ. Առաքելյանի և պրոֆ. Աշ. Աբրահամյանի, խմբագրական մարմնի անդամների և ամսագրի հրատարակությանն իրենց ծառայության բաժինը բերած հոգևոր և աշխարհական մտավորականների աշխատանքները:

Վեհափառ Հայրապետը Իր խոսքի և օրհնության ավարտին Իր մասնավոր և ջերմ գոհունակությանն է արժանացնում Իր գահակալության 14 տարիների ընթացքում «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանի ծառայությունը հուզիչ ու գեղեցիկ օրհնության կոնդակով, որը տպվել է սույն համարի 3—4 էջերում:

Ն. Ս. Օծության բարձր գնահատությանն են արժանանում նաև ամսագրի աշխատակիցներ Սարգիս Մարգարյանը, Վոլոդյա Աբրահամյանը և Արամայիս Սահակյանը, որոնք աջահամբույրով նվերներ են ստանում Հայոց Հայրապետից:

Տասը րոպե տևող ընդմիջումից հետո, գործադրության է դրվում «Էջմիածին» ամսագրի հրատարակության 25-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսության գեղարվեստական ծրագիրը:

Հոգևոր ճեմարանի Ա լսարանի ուսանող Խաչիկ Խաչատրյանը արտասանում է Ջարեն Մելքոնյանի «Էջմիածին» բանաստեղծությունը, իսկ Բ դասարանի ուսանող Վրեժ Նաճարյանը՝ Հովհ. Թումանյանի «Լուսավորչի կանթեղը»:

Մայր տաճարի երգեցիկ խմբի անդամ և Անդրկովկասի երաժշտության ստուգատեսի դպիսեկի Էլենորա Մելքոնյանը կատարում է Տիգրան Մանուդյանի «Դավիթ մարգարե» և «Երբ ես լաշխարի ելի»՝ դաշնակի ընկերակցությամբ Համիկ Տեր-Սիմոնյանի:

Հոգևոր ճեմարանի երգչախումբը, երաժշտության դասատու **Խորեն Մելիսանյանի** ղեկավարությամբ, կատարում է Կոմիտաս վարդապետի հարսանյաց երգերից, այդ թվում՝ «Փեսին ցովքը», «Հանելուկ», «Ծորջպար» և «Խումար պառկե», ապա Մարտին Մազմանյանի «Կարմիր վարդ»-ը:


Հայաստանի ջութակահարների համույթը, հանրապետության վաստակավոր արտիստ **Գևորգ Աճեմյանի** ղեկավարությամբ և դաշնամուրի ընկերակցությամբ, կատարում է՝ Բախ-Գուն՝ «Ավե Մարիա», Կոմիտաս վարդապետ՝ «Ալ ալլուդա» և «Կաքավիկ», Արամ Խաչատրյան՝ «Անտանտիստ» և «Սուսերով պար», և Դիմեսկու՝ «Ռումինական շուրջպար»:

Հանրապետության վաստակավոր արտիստուհի և Մայր տաճարի երգեցիկ խմբի մենակատար Լուսինե Զաքարյանը կատա-

րում է «Լուսավորչի կանթեղը», երաժշտությունը՝ Ծափան Դերպերյանի, «Ուրախ լեր», «Սուրբ, սուրբ» և Կոմիտասյան «Հայաստան»-ը:

«Էջմիածին» ամսագրի հրատարակության 25-ամյակին նվիրված հանդիսության զեղարվեստական բաժինը ավարտվում է ընդհանուր ու խանդավառ ծափողջույնների և սրտագին արտահայտությունների մեջ:

Հանուն Վեհափառ Հայրապետի **տ. Հայկազուն արքեպիսկոպոսը** ջերմ շնորհակալություն է հայտնում օրվա հանդիսությունը կազմակերպող «Էջմիածին» ամսագրի խմբագրությանը և հանդեսին իրենց շնորհալի մասնակցությունը բերած արվեստագետներին, երգիչներին, արտասանողներին և բոլորին՝ իրենց ներկայության համար:





ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ «ՀԱՅԿԱԾԷՆ»
ԱՄԱՌԱՆՈՑԱՅԻՆ ԾԵՆՔԻ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ
ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԲՅՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Հունիսի 14-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 12-ին, հանդիսավոր իրադրության մեջ և խանդավառ մթնոլորտում և օրհնությամբ Վեհափառ Հայրապետի կատարվում է Աշտարակի շրջանի Բյուրական գյուղում հայրապետական «Հայկաշեն» նոր ամառանոցային շենքի հիմնարկերը:

Ամառային պայծառ առավոտ է: Գերագույն հոգևոր խորհուրդը, Մայր Աթոռի միաբանությունը, մայրավանքի պաշտոնեությունը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսներն ու լսարանների ուսանողությունը ինքաշարժով մեկնում են Բյուրական՝ ներկա լինելու հանդիսությանը:

Դեպի Բյուրական տանող ճանապարհի եզրերին բազմաթիվ հավատացյալներ անհամբեր սպասում են Ն. Ս. Օծույան ժամանելուն և ապա իրենց որդիական հարգանքը մատուցում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Ամառանոցի կառուցվելիք շենքի հողամասը սիրով տրամադրել է Հայոց Հայրապետին հայրենի իշխանությունը: Հողամասը գտնվում է Բյուրական գյուղի վերին մասում, Արագածի գեղատեսիլ, գմբուխայա լանջին: Հողամասի երկու կողմերից ձորն են զահալիժում երկու փրփրադեզ գետակներ: Ամենուրեք ծաղիկներ, թռչունների ճուղիչուն, կենարար օդ, սառնորակ ջրեր: Բյուրականը Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի ամենամեծ գյուղն է եղել,

որի մասին առաջին անգամ հիշատակում է Ժ դարի սկզբին Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը:

ԺԵ դարում Մկրտիչ անունով մի քահանա Բյուրականում ընդօրինակել է «Յիսուս որդի» գիրքը, որի հիշատակարանում նշում է, որ այս գյուղում կան մենաստաններ՝ ս. Աստվածածին և ս. Հովհան եկեղեցիներով:

1874 թ. Գևորգ Դ կաթողիկոսը այստեղ կառուցում է հայրապետական ամառանոց:

Ն. Ս. Օծույանը Իր շքախմբով ժամանում է հայրապետական ապագա ամառանոցավայրը: Բազմաթիվ մեքենաներ ու բանվորներ, շինարար վարպետներ աշխատում են, փորում շենքի հիմքերը:


Ամառանոցի նախագիծը պատրաստել է անվանի ճարտարապետ և Մայր Աթոռի ճարտարապետական հանձնաժողովի անդամ Ռաֆայել Իսրայելյանը:

Հավատացյալների, մտավորականների և շինարար-վարպետների խումբը ջերմորեն շրջապատում է իր Վեհափառ Հայրապետին:

Հայրապետական ամառանոցը կառուցվում է ամերիկահայ ծանոթ ու հարգված ազգային և Մայր Աթոռի բարերար տիսր Հայկ Գալուքչյանի նվիրատվությամբ:

Հանդիսությանը ներկա են նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաբջյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Սկսվում է հիմնարկերի օրհնությունը: Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ





Վեհափառ Հայրապետը հիշատակարանը ամփոփում է «Հայկաշեն»-ի հիմքում

պատրաստվել էր հետևյալ հիշատակարանը, որը դրվելու էր, ըստ հայկական սովորության, նորակառույց շենքի հիմքում.

Ֆիշատակարան

Ի Հայրապետության Տեառն Տեառն Վազգենի Առաջնոյ կաթողիկոսին Ամենայն Հայոց, կառուցաւ հայրապետական հովոցս ի լեռնակողման Բիրականայ գեղջ, արդեամբ եւ ծախիւք կ. պոլսեցի ամերկաբնակ Հայկ Գաւուքճեանի, վասնորոյ կոչեցաւ հովոցս՝

«Հայկաշեն», ի յիշատակ հանգուցեալ ծնողացն իւրոյ, եւ ի վայելումն հարչապետացն Ամենայն Հայոց, եւ միաբանիցն Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի:

Ֆիշատակն բարերարին օրհնութեամբ եղիցի. ամէն:

Ի 14-ն յունիսի 1969 ամի:

Այս հիշատակարանի վրա ստորագրում են՝ Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանները, ճարտարապետ Ռ. Իսրայելյանը, շինարարները և ներկաներից շատերը: Ապա հիշատակարանը դրվում է ապակե սրվակի մեջ, զմուսվում և Հայոց Հայրապե-

տի օրհնությամբ տեղադրվում է շենքի հիմքում:

Սկսվում է հիմնարկների օրհնության արարողությունը. «Ի վերայ վիմի հաւատոյ շինեցեր զքնակարանս այս, զսա պահեա ի խաղաղութեան»: Մայր Մաշտոցից քաղվածաբար կարդացվում են հիմնարկի վերաբերյալ ս. գրական ընթերցումներ, համապատասխան երգերով, և վերջում՝ «Էջմիածինն ի Հօրէ» շարականը: Արարողությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և միաբերան երգված «Հայր մեր»-ով:

Այնուհետև բոլոր ներկաները հյուրասիրվում են հայկական կոնյակով և քաղցրավենիքով՝ քարեմաղթություններ անելով հայրապետական ամառանոցի հաջող և շուտափույթ կառուցման համար:


Վեհափառ Հայրապետը խոսք առնելով այս ուրախ ու պատմական առիթով, ասում է.

Նախ Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում մեր հայրենի բարեխնամ կառավարությանը, որի թույլտվությամբ

և արտոնությամբ ստացանք, այս երկու հեկտարանոց հողակտորը՝ «Հայկաշեն»-ը կառուցելու համար: Այնուհետև Մեր շնորհակալությունն ենք հայտնում բոլոր այն ղեկավար մարմիններին, որոնք այս գործում օգտակար եղան և պիտի լինեն մեզ: Մենք՝ որպես հայ եկեղեցու Պետ, օրհնում ենք մեր տաղանդավոր, աշխատասեր և շինարար հայ ժողովուրդը, որի կառուցողական հանձարը հայտնի է ողջ մարդկությանը: Թող միշտ շինի, կառուցի մեր ժողովուրդը և շենացնի մեր մայր հայրենիքը:

Ապա Ն. Ս. Օծությունը Իր խոսքն ուղղելով «Հայկաշեն»-ի շինարարներին, բանվորներին, օրհնում է նրանց աշխարհաշեն, պատվավոր գործը, ցանկանում է բոլորին քաջաոռոգություն, ձեռնարկած գործի բարեհաջող ավարտ:

Ժամը 13-ին Վեհափառ Հայրապետը հրաժեշտ տալով բոլոր ներկաներին, հոգեպես մխիթարված ու բարձր տրամադրության մեջ, Իր շքախմբով վերադառնում է Մայր Աթոռ:





ՊԱՏՎՈԳՐԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ «ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Հունիսի 28-ին, երկուշաբթի օրը, կեսօրից հետո, ժամը 13-ին, Վեհաբանում, հանդիսավոր իրադրության մեջ, «Էջմիածին» ամսագրի հրատարակության 25-ամյակի առիթով Սովետական Միության Խաղաղության պաշտպանության Կենտրոնական կոմիտեի պատվոգրեր հանձնվեցին խմբագիր Արթուր Հատիսյանին և խմբագրությանը՝ խաղաղասիրական և հայրենասիրական երկարամյա գործունեության համար:

Հանդիսությունը նախագահում էր լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Արքահայրանը: Ներկա էին՝ Տիրամայրը, Մայր Աթոռի միաբանությունը, վանքի պաշտոնեությունը:

Պատվոգրերի տվչությունը ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի քարտուղար տիկին Հեղուշ Խաչատրյանը ընթերցում է Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի պատվոգրերը և ապա, ջերմորեն շնորհավորելով խմբագրին և խմբագրությանը բարձր պարգևի առիթով, ընդհանուր խանդավառության և ծափերի մեջ խմբագիր Ա. Հատիսյանին է հանձնում երկու պատվոգրերը:

Ծնորհավորության ջերմ խոսքեր են ասում, հանուն Վեհափառ Հայրապետի՝ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, հանուն հոգեվոր նեմարանի՝ տեսուչ տ. Ներսես Ծ. վրդ.

Պողապալյանը, և հանուն Մայր Աթոռի պաշտոնեության՝ դիվանապետ Հ. Առաքելյանը:

Բարձր պարգևի առիթով «Էջմիածին» ամսագրի խմբագրին և խմբագրությանը շնորհավորում է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը:

Հանդիսության ավարտին սրտագին շնորհակալության և երախտագիտության խոսք է ասում խմբագիր Ա. Հատիսյանը՝ Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեին և Հայաստանի կոմիտեին ուղղյալ, և շեշտում, որ «Էջմիածին» ամսագիրը այսուհետև էլ խաղաղության ջերմ պաշտպան Վեհափառ Հայրապետի գլխավորության և օրհնության ներքո կշարունակի նաև իր խաղաղասիրական, մարդասիրական գործունեությունը, որը բնական հետևանքն է հայ եկեղեցու քրիստոնեական համոզմունքների, քրիստոսավանդ պատգամի, Մայր Աթոռ ս. Էջմիածնի հայրենասիրական գործունեության ու մարդասիրական վեհ իդեալների:

Խաղաղությունը Աստուծո կամքն է:

Հանդիսության ավարտին տեղի է ունենում մտերմական շրջանակի մեջ հյուրասիրություն:

Ներկաներից շատերը ջերմորեն շնորհավորում են «Էջմիածին» ամսագրի խմբագրին և խմբագրությանը բարձր պարգևի առիթով և հաջողություն մաղթում նրանց՝ հետագա է՛լ ավելի բեղուն խաղաղասիրական և մարդասիրական գործունեության մեջ:

ПОЧЕТНАЯ ГРАМОТА

Мурман. Эммануил
Орган Кабинета Великого

награждается
Почетной Грамотой
Советского Комитета
Защиты Мира

за активную деятельность
по укреплению мира
между народами



1949

1969



Организация Советского
Союза по защите мира
Москва


Михайлов

Михайлов

№ 1115

Москва 30 мая

1969



ԱՄՍՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 6-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 12-ին, հոգևոր ճեմարանի հանդիսարանում, **Ամենայն Հայոց Հայրապետի** բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ 1968—1969 ուսումնական տարվա ամսվերջի հանդիսությունը, որին ներկա էին՝ Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունը, դասախոսական կազմը և բազմաթիվ հրավիրյալներ:

Հանդեսն սկսվում է Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագով: Այնուհետև ճեմարանի երգչախումբը կատարում է «Որք զարդարեցին» Թարգմանչաց շարականը:

Հանդեսը հակիրճ խոսքով բացում է ավագ վերակացու արժ. տ. Նշան քհն. Բելլերյանը, որից հետո գործադրվում է հանդիսության գեղարվեստական մասը:

Հոգևոր ճեմարանի երգչախումբը, երաժշտության դասատու Խորեն Մելիսանյանի ղեկավարությամբ, կատարում է Կոմիտասի «Խումար պառկե», «Թագվորի մեր», Մ. Մազմանյանի «Կարմիր վարդ» և «Ծեմարանի քայլերգ» խմբերգերը: Ա. լսարանի ուսանող Խաչիկ Խաչատրյանը դաշնամուրի վրա կատարում է Իմա Բարեցցայի «Ծոյանք»-ը, Վարդան և Հակոբ սարկավագները՝ Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետից մի հատված, Արարատ և Հովհաննես սարկավագները՝ Բրանսի հինգերորդ պարը: Բ դասարանի ուսանող Վրեժ Նաճարյանը արտասանում է Հովհ. Թումանյանի «Լուսավորչի կանթեղը», Խաչիկ Խաչատրյանը՝ Զ. Մելքոնյանի «Էջմիածին», և Տիգրան Սա-

հակյանը՝ Վ. Տերյանի «Որպես լեռն է մեր պայծառ» բանաստեղծությունները:

Հանուն հոգևոր ճեմարանի ողջ ուսանողության և մասնավորաբար՝ Գ. լսարանի շրջանավարտ-ուսանողների, երախտագիտության և շնորհակալության ուղերձ է կարդում, Վեհափառ Հայրապետին ուղղյալ, այս տարվա շրջանավարտ բարեջնորհ Հովհաննես սրկ. Գրվըգյանը:

«Վեհափառ Տեր,

Ամսվերջի հանդեսի այս հուզիչ պահին թույլ տվեք նախ և Էջմիածնի հոգևոր ճեմարանի ուսումնական տարվա շրջանավարտ-սարկավագ եղբայրներիս և ողջ ուսանողության զգացմունքների ու խոհերի թարգմանը հանդիսանալ՝ հայտնելով նրանց որդիական ջերմ սերն ու երախտագիտությունը Զերդ Ա. Օծությանը, ճեմարանի տեսչությանն ու դասախոսական կազմին:

Մայր Աթոռ և Էջմիածինը հին է այնքան, որքան հայ ժողովրդի քրիստոնեական հավատքը:

Ա. Էջմիածնի հոգևոր դպրոցը գոյություն է ունեցել դեռևս սուրբ Լուսավորչի օրերից և, հանդիսանալով հայ մշակույթի ու դրաբանության պատմական օջախներից մեկը, պատասխանատու և դժվարին դեր է կատարել Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու կյանքում՝ դաստիարակելով իրենց կոչմանն ու պարտականությանը գիտակից, զարգացած, հավատավոր ու հայրենամեկեր եկեղեցականներ:

Հնուց ի վեր Մայր Աթոռ և Էջմիածինը եղել է գլուխն ու կենտրոնը հայ եկեղեցու,

այն լուսատու փարուք, որը դարեր շարունակ լույս է բաշխել հայ ժողովրդին: Ս. Էջմիածինը հայ ժողովրդի կենսունակության ու տոկունության խորհրդանիշն է: Դարեր շարունակ այս սուրբ հաստատությունից են բխել հորդառատ լույսն ու գիտությունը, և այս հաստատության յուրաքանչյուր սպասավոր դարձել է ճրագ ու մոմ՝ լուսավորելու հայ ժողովրդի ծանր ու դժվարին ճանապարհը:

Այսօր մենք՝ այս բազմադարյան հաստատության սրբազան կամարների տակ մեր միտքն ու հոգին ձևավորած մեր լուսաբնակ նախնիների համեստ հետևողներն, նույնպես շատ բանով ենք պարտական մշակույթի ու դպրության այս վառարանին: Անցնող վեց տարիների ընթացքում հոգևոր ճեմարանը ընդարձակեց մեր մտքի հորիզոնը, տվեց մեզ հետադարձ աչքեր՝ ամենապարզ երևույթների մեջ խորհուրդ կարդալու և հրաշք տեսնելու: Ճեմարանը եղավ մեր կամքի ու նկարագրի դարբնոցը:

Մեր ուսումնառության տարիների ընթացքում մենք ակնհայտեցինք, որ Ձեր վեհափառությունը ցուցաբերեց և այժմ էլ ցուցաբերում է հոգևոր ճեմարանի հանդեպ՝ կանգ չառնելով բարոյական ու նյութական ոչ մի գոհողության առջև: Դո՛ւք, Վեհափառ Տեր, Ձեր սրտին այնքան մոտ եք գգում հոգևոր ճեմարանը, որ, խոնարհաբար Ձեր հայրապետական գահից իջնելով, գալիս եք այստեղ դասավանդելու և Ձեր հոգու և մտքի ազնվագույն սերմերը ցանելու մեր մատաղ հոգիների սեռ: Ձեր անձնական կյանքի օրինակով, նկարագրի և բարձր անհատականության դրոշմն եք դրել մեր մտքի ու հոգու վրա: Հոգևոր ճեմարանի նկատմամբ Ձեր ցուցաբերած հայրական այս շերտ հոգատարությունը պարտավորեցնում է բոլորիս համառ ու մեղմաջան աշխատանքով, օրինակելի վարքով, բարի գործերով արդարացնել Ձեր հայրապետական բարձր վրձնափայլությունը:

Մի՞թե հանդիսավոր այս պահին կարող ենք մոռանալ մեզ բոլորիս սիրելի հոգևոր ճեմարանի նախկին վերատեսուչ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանին՝ մեր շատ սիրելի հոգևոր հորը, որի անունը միշտ կապված պիտի մնա հետագա մեր կյանքի ու գործունեության ամբողջ ընթացքում: Սրբազան հայրը հաճախ մեր հուսահատության և ընկրկումի պահերին մեզ հավատք ներշնչող և մեզ վեր բարձրացնող օգնական ձեռքը եղավ, անորոշության պահերին՝ մեր քայլերը ազնվագույն մի նպատակի ուղղող առաջնորդը: Սրտագին շնորհակալություն ձեզ, Սրբազան Հայր:

Վերջին տարիներին հոգևոր ճեմարանում ուսումնական և դաստիարակական աշխատանքների գծով ձեռք բերված հաջողությունների մեջ իր կարևոր բաժինն ունի նաև հոգևոր ճեմարանի երիտասարդ տեսուչ հոգ. տ. Ներսես Ժ. վրդ. Պողոսյանը՝ իր կոչմանն ու պարտականությանը նվիրված մի հոգևորական, որ բոլորիս համար դարձավ ավագ եղբայր ու իր անմիջական հրկուղությամբ ու հոգատարությամբ աշխատեց ազնվացնել մեր նկարագիրն ու հոգին:


Մեր սրտում երախտագիտական քաղցր զգացումներ ունենք նաև մեր վերակացունքի՝ արծ. տ. Նշան քհն. Բեյլերյանի, պ. Ս. Հովհիվանի, պ. Բ. Թաշճյանի հանդեպ, որոնք եղան մեր ամենօրյա դասերին և աշխատանքներին հսկող գիտակից, բարեխիղճ դաստիարակներ:

Չենք կարող մոռանալ նաև մեր սիրելի դասախոսներին, մի խումբ պատրաստված մշակների՝ գիտակից իրենց կոչմանն ու պաշտոնին, որոնք, ինչպես սիրելի հարազատներ, իրենց նվիրական տեղն ունեն մեր երախտագետ սրտերում: Սիրելի դասախոսներ, դուք տիրեցիք մեր մտքին, սրտին, մեզ նվիրեցիք ձեր միտքն ու գիտությունը: Մենք միշտ էլ երախտագիտությամբ պիտի հիշենք ձեր թանկագին անուններն ու ձեր ոսկյա խրատները:

Բաժանումի այս հանդիսավոր ու տխուր պահին երբ հրաժեշտ ենք առնում նվիրական այս սուրբ հարկից, մեր բարի ցանկությունն է, որ մենք՝ շրջանակարտներս, արժանի լինենք մեր ստացած կրթությանը, ավելին՝ արժանի լինենք ձեր բոլորի վստահությանն ու հավատքին: Ի սրտե ցանկանում ենք, որ ս. Էջմիածնի կրոնաբույր այս մթնոլորտում, ոգեկան լույսի մեջ օրեցօր աճեն հոգևոր ճեմարանի սաները, հասունանան նրանց մտավոր ու հոգեկան կյանքը ծառայության ճանապարհի վրա՝ ի փառս ս. Էջմիածնի և Մայր Հայաստանի:

Նշանակալից այս թույլեն, որից հետո սկսվելու է մեր կյանքի ու գործունեության երկրորդ շրջանը, նոր կյանքի անկյունաքարն էլ վրա, գոտեպնդվելու և հետագա բոլոր դժվարությունները դիմագրավելու համար թույլ տվեք, Վեհափառ Տեր, իմ և իմ դասընկերների ու հոգևոր ճեմարանի ողջ ուսանողության կողմից համբուրել Ձեր ս. Աջը: Այդ Աջը այսուհետև թող միշտ ուղեկցի մեզ մեր ծառայության ճանապարհին և առաջնորդ-ուղեցույցը հանդիսանա մեզ՝ մեր հետագա գործունեության բոլոր հանգրվաններում:

Ապա Հոգևոր ճեմարանի 1968—1969 ուսումնական տարեշրջանի մասին հանգամանալից զեկուցումով հանդես է գալիս տե-



Ընմարանի տեսուչ տ. Ներսես Ժ. վրդ. Պողապալյանը սաների հետ

տուչ տ. Ներսես Ժ. վրդ. Պողապալյանը.

«Վեհափառ Տեր և հարգարժան հանդիսականներ.

Կամոքն Աստուծո, 1968—1969 ուսումնական տարին ևս բարվոք բոլորեցինք հոգեվոր ճեմարանի հարկին տակ, դասախոսների և ուսանողների միասնաբար, անխնայ աշխատանքով: Այժմ ամսվերջի հանդիսության ժամն է, հաշվեհարդարի պահը, Ավետարանի խոսքերը դարձյալ հնչում են մեր գիտակցության մեջ. «Տուր զհամար տնտեսության քո» բառերով:

Այս տարին հոգևոր ճեմարանի վերաբացման 24-ամյակն էր, և ընդհանրապես նրա գոյության ավելի քան 1600-ամյակը, որովհետև՝ ինչպես մեր նախնյաց վկայությունները հաստատում են, հոգևոր այս կրթարանը գոյություն է ունեցել ս. Էջմիածնի հիմնադրության օրերից սկսած: Այդ իսկ պատճառով դժվար է մեզ համար երևակայել ս. Էջմիածինը առանց ճեմարանի, ինչպես Արարատը՝ առանց Փոքր Մասիսի:

Այս հաստատությունը մեզ համար եղել է միաժամանակ սուրբ և նվիրական, մեր նախնյաց կենդանի և փոխանցվող ոգիները միշտ մեզ շրջապատում են: Ամեն մեկ քարի, խոյակի, գմբեթի վրա նրանց մատների

հետքերը տեսնում և լսում ենք տակավին աղոթքների միմունջները, այդ իսկ պատճառով մեր հոգեկան տկարությունների պահին փորձում ենք ունկնդրել նրանց հավիտենական սփոփարար և մխիթարիչ ձայնը:

Սրտով և սիրով նվիրվեցինք այս գործին, որովհետև հավատում էինք և ենք, որ հայ եկեղեցու ծաղկման և պայծառակերտման մեծագույն սատարը հոգևոր ճեմարանն է, որ պիտի կարողանա գիտակից սպասավորներ պատրաստել հայ եկեղեցու և հայ ժողովրդի համար, ի Հայաստան և ի սփյուռքս աշխարհի:

Հավատում ենք, որ Հայաստանյայց եկեղեցին հայոց տունն է՝ ամուր և հաստատուն Քրիստոսի վեմի վրա հիմնված և իր մարտիրոսների արյամբ ուռճացած: Դարերի փոթորիկները, հալածանքները և ձուլման բոլոր տեսակի վտանգները նրա կողերին խփվելով փշրվել են ու նահանջել: Ահա հայոց եկեղեցին, որպես խորհրդանիշ հայ ժողովրդի հավիտենական գոյատևման, կա և կմնա ամուր և անասան, աշխարհի բոլոր ծագերում իր զավակների շրթերին հաղորդության հետ տալով նաև հայոց լեզվի մեսրոպատառ հունչը:

Հայաստանյայց եկեղեցին այսօր ևս նույն

նվիրական դերն է կատարում սփյուռքի տարածքի վրա մեր բազմահազար զավակների համար: Հայաստանյայց եկեղեցին հույս է, փրկության և ճշմարտության փառու՝ իր բոլոր զավակների համար:

Ի՞նչ է Հայաստանյայց եկեղեցին. հոտն ու հովիվը միասնաբար և հավելյալ հայեցի ոգին:

Այսօր, փառք Աստծու, տնտեսական բարվոք պայմանների մեջ են ապրում մեր եղբայրները: Այսօր շինում ենք աղոթքի փառավոր տաճարները, աշխարհի նույնիսկ ամենափառքամ և ամենաշքեղ քաղաքներում: Մտածո՞ւմ ենք արդյոք այդ շքեղ տաճարների, խորանների, լուսավորչադիր կանթեղների լույսի տևականացման մասին: Ունե՞նք արժանավոր հոգևորականներ՝ կոչումով և ծառայասիրությամբ արժանի այդ շքեղ տաճարներում ապաստելու և հովվելու հայ ժողովուրդը: Այս կամ այն գաղութում ուժացող մեր եղբայրներին օգնության հասնելու համար ունե՞նք գիտակից հոգևորականներ: Եկեղեցին պայծառ է և կենդանի իր հոգեվորականների գիտակցական, ծառայասիրական և առավելապես նվիրումի մակարդակով: Վստահաբար այսօրվա մեր լայն նյութական պայմանները չունենին մեր թարգմանիչ վարդապետները հինգերորդ դարում: Սակայն, նրանք լուսավորեցին հայ միտքն ու հոգին և հայ եկեղեցու հավիտենության ճանապարհը հարթեցին: Նրանց լույսը մինչև այսօր լուսավորում է մեզ, ջերմացնում և մեր սպառող նվիրումը կրկնապատկում:

Այս մտորումներով և այս գիտակցությամբ ճեմարանի բոլոր դասախոսները իրենց ճիգն ու աշխատանքի բաժինը նվիրաբերում են մեր սաների միջոցով մեր եկեղեցուն: Այժմ փորձենք ներկայացնել հոգևոր ճեմարանի 1968—69 թթ. ուսումնական տարեշրջանին կատարած մեր դաստիարակչական, կրոնա-քարոչական աշխատանքների պատկերը:

Հոգևոր ճեմարանի սաները

1968—69 ուսումնական տարում ճեմարանի սաների ընդհանուր թիվը եղել է 39 հոգի: Նախորդ տարվանից մնացել են 27 սաներ, նոր ընդունվել են 12-ը: Դպրոցական այս տարին փակում ենք 33 սաներով: Այլ և այլ պատճառներով ուսումնական տարում 6 սաներ հեռացվել են ճեմարանից:

Սաների դասարանական բաշխման պատկերը հետևյալն է. Գ լսարան—3 սարկավագ, Բ լսարան—2 սարկավագ, Ա լսարան—6 ուրարակիր, Գ դասարան—6 սան,

Բ դասարան—6 սան, Ա դասարան—10 սան:

Ճեմարանի սաներից 11-ը արտասահմանցիներ են՝ եկած Մերձավոր Արևելքի և արեւելյան Եվրոպայի երկրներից, իսկ 22-ը՝ Հայաստանից և դրացի հանրապետություններից:

Հույս ունենք հառաջիկա տարում հոգևոր ճեմարանի սաների թիվը ավելացնել. արդեն իսկ դիմումներ ունենք, նոր սաներ են գալու Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Բուլղարիայից և Իրաքից:

Դասախոսական կազմ

1968—69 ուսումնական տարում հոգևոր ճեմարանը ունեցել է 19 դասախոսներ, որոնցից 6-ը հոգևորական են և 13-ը՝ աշխարհական: Ճեմարանի դասախոսական կազմի ուսուցչապետն է ազգիս Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա. կաթողիկոսը: Ամենայն Հայոց, որ բազմազբաղ իր ժամանակից կարողանում է գտնել պահեր, տրամադրելու համար իր հոգևոր որդիոց դաստիարակման գործին:

Ճեմարանում դասախոսում են՝ տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, տ. Ներսես Ժ. վարդապետ Պողոսյանը, տ. Նշան քահանա Բեյլերյանը, տ. Հովհաննես քահանա Մարտիկյանը, բարեշնորհ Հակոբ սարկավագ Գյուլշյանը: Աշխարհական դասախոսներն են՝ Արթուր Հատիտյանը, Գրիգոր Գյուլյանը, Պարզև Ծախազյանը, Սամվել Անթոնյանը, Բարսեղ Թաշճյանը, Սիմոն Հովիվյանը, Արամ Կարապետյանը, Գևորգ Գևորգյանը, Վարշամ Փարսադանյանը, Խորեն Մելխանաշյանը, Արամայիս Սահակյանը, Հայկ Ֆրունջյանը և Հարություն Սիմոնյանը:

Պարտիմ ավելացնել այս շարքին վրահան տիկին Անժել Բալունու և տիկին Ռոզա Մուրադյանի անունները, որոնք բարեխղճորեն շաբաթը երկուական անգամ եկան ճեմարան՝ առաջինը դասավանդելու համար դաշնամուրի դասեր. 7 սաների և երկրորդը՝ մեքենագրության դասեր Ա լսարանի սաներին:

Այս տարի հոգևոր ճեմարանում որպես վերակացու ունեցել ենք՝ տ. Նշան քահ. Բեյլերյանը, Բարսեղ Թաշճյանն ու Սիմոն Հովիվյանը: Նրանք իրենց ջանքը և աշխատանքը չեն խնայել հոգևոր ճեմարանի ներքին կարգապահությունը կալուն և օրինակելի վիճակում պահելու գործում:

Ազնիվ հպարտությամբ պետք է հաստատեն, որ մեր բոլոր դասախոսները իրենց ճիգը երբեք չեն խնայել կրթական և դաս-

տիրակազմական իրենց գործի ճանապարհին: Տվել են իրենց գիտելիքները դասավանդված առարկաների միջոցով և միաժամանակ պարտականություն են համարել պատրաստելու եկեղեցատեր և կոչման տեր անձեր՝ հայ եկեղեցու սպասավորման համար:

Նվիրական այս պահին հաճույքն ունեւ շնորհակալության ամենաջերմ խոսք ասել մեր սիրելի դասախոսական կազմին: Սիրելի դասախոսներ, Աստված մեզ շնորհել է մեր անցավոր կյանքում մի առիթ, ծառայելու այս պատվաբեր այգում որպէս մշակներ. «Մշակը առանց ամօթոյ», թող Աստծո հովանին անպակաս լինի ձեր և ձեր սիրելիների վրայից: Թող պտուղների մեր ամեն մեկ ցանած սերմը մեր սաների բանական անդաստանների մեջ:

Ուսումնական կյանք

Հոգևոր ճեմարանում շաբաթը վեց օր դասավանդություն է տեղի ունենում, բացի կիրակի, կրոնական և այլ կարևոր տոնական օրերից: Ամեն դասարան օրը վեց ժամ դասունի, շաբաթական՝ 36 ժամ: Դասերը սկսվում են առավոտյան 9.30-ին և ավարտվում 2.30-ին:

Ուսանողները կեսօրից հետո 2 ժամ (3-ից 5ը) ազատ են: Իսկ ժամը 5-ից մինչև 10-ը սերտում են վերակացուների հսկողությամբ: 5-ժամյա սերտողության ընթացքում նրանք մասնակցում են երեկոյան ժամերգությանը կես ժամով, ժամը 5-ին, և կես ժամ էլ տրամադրում են ընթերցման, երեկոյան ժամը 8-ին: Այսպիսով, օրական 4 ժամ մնում է նրանց սերտելու և ինքնուրույն աշխատանքի համար:

Հոգևոր ճեմարանի գոյության նպատակն է՝ գիտակից և կրթված եկեղեցականներ պատրաստել: Այս նպատակով իսկ ամեն դասախոս բարոյական պարտականություն ունի իրեն հանձնարարված ուսումնական ծրագիրը իրագործելուց բացի քաջալերել սաներին՝ հոգևոր ծառայության նվիրվելու: Մեր նպատակն է՝ իմացական պատրաստության գոգահետ, իրոնական, ազգային և բարոյական դաստիարակություն ևս ջանքել մեր սաներին: Այս նպատակով և ակնկալությամբ հաճախ հրավիրել ենք հոգևոր ճեմարանի դասախոսներից բացի այլ անձնավորություններ, դասախոսելու այժմեական հարցերի մասին:

Ուսումնական այս տարում գոհունակությամբ ունկնդրեցինք դասախոսությունների շինիչ շարքը հանրաժանոր գրող-բանասեր և պատմաբան պրոֆ. Հ. Ծ. Սիրունու, նվիր-

ված 19 և 20-րդ դարերի հայտնի հայ հոգեվոր դեմքերին:

Ուրախությամբ ունկնդրեցինք նաև Կոմիտաս վարդապետի երախտագետ աշակերտ, երաժշտագետ Միհրան Թումանյանի զույգ բանախոսությունները, առաջինը՝ Կոմիտաս վարդապետի 100-ամյակին նվիրված, և երկրորդը՝ երաժշտագետ Բարսեղ Կանաչյանի վաստակին (այս բանախոսության ներկա էին Կանաչյանի այրին և դուստրը):

Երրորդ բանախոսը եղավ բժիշկ Ստեփան Տեր-Ստեփանյանը, որը մոտ 10 հերթական հանդիպումներ ունեցավ մեր սաների հետ՝ առողջապահական և սեռային հարցերի մասին զրուցելու համար:

Չորրորդ բանախոսը եղավ բուլղար ուղղափառ եկեղեցու հոգևորական Կորազդ վարդապետը, որ խոսեցավ սուրբ Կղեմես Բուղարացու կյանքի և գործի մասին:

Հաջորդ հյուր-բանախոսն էր «Նաիրի» շաբաթաթերթի հարգելի խմբագիրը՝ Անդրանիկ Ծառուկյանը, որը խոսեց «Սփյուռքահայ կյանքը, երիտասարդությունը և հոգեվորականի դերը» շատ շահեկան նյութի շուրջը:

Վերջին մեր բանախոսն էր դոկտոր Հակոբ Ներստյանը՝ Միացյալ Նահանգներից ուխտավորաբար ս. Էջմիածին եկած: Դոկտ. Ներստյանը խոսեց դասախոսությունների մի շարք՝ աստվածաբանական վաղեմի և արդի ըմբռնողությունների մասին:

Ճեմարանցիների հոգևոր, իմացական և հայրենասիրական զգացումների պայծառակերտման գործում իր անգնահատելի նըպաստն է բերել ազգիս Վեհափառ Հայրապետը՝ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը: Վեհափառը բացի Իր դասավանդած առարկաներից հաճախ շաբաթ երեկոներին հոգևոր ճեմարանի ողջ ուսանողությանը հրավիրել է Վեհարան, որպես հայր ընդ որդիս, հոգեվոր, բարոյական և դաստիարակչական հարցերի մասին ուսանողների հետ զրուցելու համար: Բացի այս հանդիպումներից, Վեհափառ Հայրապետը նաև մի շարք առիթներով լսարանների ուսանողներին հավաքել է Իր շուրջը՝ հոգևոր սպասավորության և Հայաստանյայց ս. եկեղեցու դերի մասին խոսելու համար:

Մեր խորունկ երախտագիտությունը ազգիս Վեհափառ Հայրապետին: Տա Աստված, որ բերրի լինեն մեր աշակերտների սրտերը և արգասավորվեն: Եվ դա կլինի մեր մեծագույն մխիթարանքը:

Ճեմարանի առօրյան

Ամեն առավոտ ճեմարանի սաները զարթնում են ժամը 7-ին: Կես ժամ մարզանք ա-

նելուց հետո, գնում են եկեղեցի ժամը 8-ին՝ ժամերգության մասնակցելու համար: Ժամը 8.45-ին նախաճաշում են, ապա 9.30-ին սկսում դասերը: Ժամը 12-ին ուսանողները նախաճաշիկ են անում, 2.30-ին ճաշում:

Ուսանողները ժամը 3-ից մինչև 5-ը ընդհանրապես խաղում, հանգստանում կամ երաժշտական փորձերին են մասնակցում: Երեկոյան ժամերգությունը սկսվում է ժամը 5-ին և տևում կես ժամ: Այսպես սկսվում է սերտողությունը ժամը 5.30-ին և տևում մինչև ժամը 8-ը: Ժամը 8-ին ընթրում են և շարունակում նորից սերտողությունը մինչև ժամը 10-ը, որից հետո հավաքաբար աղոթում են և գնում ննջելու:

Բացի չորեքշաբթի երեկոներից՝ այս է մեր ստորյան: Չորեքշաբթի երեկոներին, ժամը 9.30-ին, ուսանողները հավաքվում են եկեղեցի աղոթելու, այդ առթիվ կատարվում են խաղաղական, հանգստյան ժամեր, Մեծի Պահոց շրջանին ուսանողները խորհրդածում են եկեղեցում նախօրոք տրված թեմաների մասին, որոնք հաճախ նույն երեկոյան քարոզի ձևով խոսվում են հոգևորականների կողմից:

Հոգևոր ճեմարանի սաները անխափան ամեն առավոտ և երեկո գործունե կերպով մասնակցում են ժամերգությանը և պատարագներին: Նրանք ուսումնական տարվա ընթացքում բազմիցս հավաքաբար ու հաղորդություն են ստանում տաղավարների և կարևոր տոների օրերին: Մեր դաստիարակության մեջ առաջնահերթը սաների կրոնական ու հոգևոր դաստիարակությունն է:

Այս տարի հոգևոր ճեմարանում գրեթե ամեն շաբաթ երեկոյան կանոնավոր կերպով ցուցադրվել են շարժանկարներ, որոնք բերվել են փոխառաքար Երևանից: Ուսանողների երաժշտական ճաշակի ազնվացման համար ճեմարանում երաժշտության դասավանդման մեծապես կարևորություն է տրվում: Մեր սաներից շատերը կարող են ազատ կերպով դաշնամուրի վրա նվագել ու երգել: Այս տարի հոգևոր ճեմարանում համերգ տվեցին տաղանդավոր ջութակահար և նրան դաշնամուրով ընկերակցող քույր և եղբայր Սվանյանները՝ հոգեկան մեծ վայելք պատճառելով բոլորին: Քանիցս ուսանողները գնացել են Երևան՝ երաժշտական և թատերական երեկոյաների ներկա գտնվելու:

Ուսումնական այս տարում հոգևոր ճեմարանը իր կազմով քանիցս միօրյա պտույտների է գնացել դեպի ու Գևորգա վանք, Հովհաննավանք, Սաղմոսավանք և ու Գեղարդ: Վստահ ենք, որ մեր պատմական վանքերն ու ուխտատեղիները այցելելով մեր նախնայաց ոգին փոխանցվելու է մեզ:

Հոգևոր ճեմարանից ներս մարզական կյանքը ունեցել է իր արժանավայել տեղը, սակայն ցավոք արտի, հակառակ մեր բոլոր ջանքերի, ցարդ չենք կարողացել մի մարզադաշտ ունենալ, խաղեր և հանդեսներ կազմակերպելու համար: Այս տարի մեր սաները խաղացել են ֆուտբոլ և սեղանի թենիս: Ֆուտբոլի դասարանային մրցումներին առաջնությունը շահել են Ա յսարանի սաները և Բ տեղը՝ Բ դասարանի սաները: Սեղանի թենիսի մրցումներին առաջին մրցանակը շահել է Արարատ սարկավագը, երկրորդը՝ Ժիրայր Սիմոնյանը, երրորդը՝ Տըրդատ Ծամյանը:

Հոգևոր ճեմարանը այսօր պատկառելի մի գրադարան ունի՝ շուրջ 15,000 գրքերով: Գրադարանի վարիչն է տիկ. Աստղիկ Նազիկյանը և գրադարանավարն է Տաճատ Վարդանյանը: Մեր գրադարանի դռները բաց են Մայր Աթոռի միաբանության և ճեմարանի սաների առջև:

Այստեղ պատշաճ է, որ երախտագիտական զգացումներին թարգմանը հանդիսանալ, հայտնելով ձեզ բոլորիդ, որ նյու-յորքաբնակ ազգային բարերար տիար Տատուր Տատուրյանը անցյալ աշնան հոգևոր ճեմարան իր այցելության առթիվ ճեմարանին նվիրեց արդիական գրապահոցներ 15,000 գրքի տարողությամբ: Հառաչիկա ամիսների ընթացքում գրադարանի այս սարքերը կուղարկվեն ու էջմիածին: Անցյալ աշնան ուխտավորաբար Մայր Աթոռ այցելող ազգային հայտնի քարերար տեր և տիկին Հայկ և Ալիս Գալուքչյանները հոգևոր ճեմարանի սաներին նվիրեցին մեկ-մեկ ձեռք համազգեստ: Այս առթիվ մեր սրտագին շնորհակալությունն ենք հայտնում:

Հուսկ ուրեմն, մեր երախտագետ զգացումները հոգևոր ճեմարանի բոլոր երախտավորներին, որոնք իրենց լույսն սիրով մոծեցին այս հաստատության տնականացման և Հայաստանյայց եկեղեցու պայծառության համար:

Սիրելի սաներ,

Ահավասիկ 1968—69 ուսումնական տարին ևս անցավ, դառնալու համար հուշ և պատմություն: Միանաբար մի տարի ևս բոլորեցինք, մեկ ընտանիքի նման միատեղ ապրեցինք, նույն սեղանից սնվեցինք, նույն տաճարում, աղոթեցինք, միասին հրավեցինք և տխրեցինք և միասնաբար աշխատեցինք: Թերևս երբեմն իրար վշտացրինք, ձեզանից ոմանց նաև պատժեցինք, իսկ շատ բնական է, այդ բոլորը ձեր օգտին համար էր, մեր պարտականության գիտակցությունն էր մեզ ստիպում լինել խիստ և նախանձախնդիր, սիրել և՛ ձեզ, և՛ առավելապես սիրել այս վաղեմի սուրբ հաստատությունը:

Չեր տկարությունների, թուլության, վշտի պահերին մենք ևս ձեզ հետ նույն հույզերով ապրել ենք և փորձել որպես հայր կամ եղբայր գտնել միջոցներ ձեզ ափսիելու: Անցավ տարին և այս պահին, երբ հետադարձ մի հայացք ենք գցում անցյալի վրա, ամեն ինչ պայծառ և հաճելի է երևում:

Այժմ մեր արտերը և մեր մտածումները առօրյա մտահոգություններից ձերբազատված են: Միայն մեկ մտահոգություն ունենք, և այդ մտահոգությունը այս հաստատության գոյատևման և հավերժացման մտահոգությունն է: Կարողացա՞նք արդյոք ձեր մեջ սերմանել պետք եղած չափով հավատքի, ազգասիրության և նվիրումի ոգին և ամենաէականը՝ ձեր արտերի խորքում հնչե՞ց կոչման ձայնը և նվիրումի գիտակցությունը:

Չկա մեծագույն հաճույք, քան տեսնել ձեզանց ամեն մեկին որպես վեմ անկյան մեր եկեղեցիներում: Հետևեցեք մեր պատմության ոգուն, հետևեցեք մեր եռամեծ վարդապետներին, սրբազան հայրապետներին և անձնորաց մարտիրոսներին: Նրանց ուղին որդեգրեցեք ձեզ համար, որպես ծառայության և կյանքի ուղի: Ի՞նչ կա կյանքում ավելի գեղեցիկ, քան գիտակցությամբ և սիրով կատարված զոհողությունը: Ծաղկազարդեցեք ձեր կյանքը զոհողությամբ և սուրբ նշանակների իրագործման ձգտումով: Հաղորդվեցեք մեր նախնիների հետ ձեր մտածումով և ոգեղեն ձգտումներով, եղեք ճշմարիտ ժառանգորդները այս հավերժական հաստատության:

Դժբախտ ճակատագրի բերումով մեր ժողովուրդը փոխված է ողջ աշխարհով մեկ: Եղեք մանաճան դեպի հայրենիք բերող բոլոր ճանապարհների վրա, եղեք կենսարար ջուր ծարաված հոգիների համար, եղեք հրեղեն պուր մոլորվածների համար: Լավ է ծառայության ճանապարհի վրա մեռնել, քան անգործության մատնվել:

Միրելի սաներ, սիրեցեք ս. Էջմիածինը ձեր հարազատ մորից ավելի և աշխարհի որ ծագում էլ որ գտնվեք, նպատակ ունեցեք սուրբ և բարձր պահել այս հավիտենական

հաստատության պատիվը, որպես Էջմիածնի հարազատ զավակներ»:

Ապա տեսուչ հայր սուրբը կարդում է այն ուսանողների անունները, որոնք ուսման մեջ, վարքի և արտադասարանական այլ օգտակար աշխատանքների համար արժանցել են մրցանակի:

Ուսման մեջ առաջադիմության համար պարգևատրվում են՝

Գ լսարանից՝ սարկավագներ Հովհաննես Գրվրգյանը, Արարատ Գալստյանը և Հակոբ Նալբանդյանը:

Բ լսարանից՝ սարկավագներ Ղազարոս Կյուրեղյանը և Վարդան Տեղեքյանը:

Ա լսարանից՝ Կտրիճ Ներսիսյանը և Ժիրայր Սիմոնյանը:

Գ դասարանից՝ Հակոբ Խաչատրյանն ու Հակոբ Քյուփեղյանը:

Բ դասարանից՝ Վրեժ Նաճարյանն ու Սամվել Պետրոսյանը:

Ա դասարանից՝ Ավետիս Արթինյանն ու Գևորգ Առաքելյանը:

Գերազանց վարքի համար պարգևատրվում է Բ դասարանի ուսմանահայ ուսանող Հրանտ Աղաջանյանը: Պարտեզամշակության համար՝ Արարատ սրկ. Գալստյանը, իսկ եկեղեցասիրության համար՝ Ղազարոս սրկ. Կյուրեղյանը:


Պարգևատրված բոլոր ուսանողներն իրենց նվերները ստանում են անձամբ Վեհափառ Հայրապետի ձեռքից՝ համբուրելով Նրա Աջը:

Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակի առթիվ Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ հոգևոր ճեմարանում այս տարվանից սահմանվում է Կոմիտաս վարդապետի անվան առաջին, երկրորդ և երրորդ կարգի մրցանակ՝ երաժշտության մեջ առաջադեմ ուսանողների համար:

Այս տարի առաջին մրցանակը շնորհվում է Արարատ սրկ. Գալստյանին, երկրորդը՝ Հովհաննես սրկ. Գրվրգյանին, և երրորդը՝ Հակոբ սրկ. Նալբանդյանին:

Հանդեսը վերջանում է Վեհափառ Հայրապետի պատգամով և օրհնությամբ:





ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 1-ին, կիրակի.—Ձկնի հագեցալըստեան: Սկիզբն Յարութեան Կիրակէից. Յիշատակ Նիլայի մարգարէին.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը և քարոզեց «Լուսով աստուածութեան քո Քրիստոս» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրասիտը:

*
* *

Հունիսի 7-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի վերապէն.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Մկրտիչ ավագ քհն. Մկրտչյանը:

Ս. պատարագին ներկա էր հավատացյալների հոծ բազմութիւնը:

*
* *

Հունիսի 2-ին, երկուշաբթի.—Տօն Սրբոց կուսանացն Հոփսիմեանց.

Օրվա տոնի առթիւ հանդիսավոր ս. պատարագ մատուցվեց ս. Հոփսիմեի տաճարում: Պատարագեց ս. Հոփսիմե վանքի վանահայր հոգ. տ. Պողոս վրդ. Տեր-Նշանյանը և քարոզեց «Հոփսիմէ մեծ խորհուրդ» բնաբանով: Հավարտ ս. պատարագի միաբանութիւնը և ճեմարանի ուսանողութիւնը հյուրասիրվեցին վանահոր կողմից:

*
* *

Հունիսի 3-ին, երեքշաբթի.—Տօն Սրբոց կուսանացն Գայիանեանց:

Օրվա տոնի առթիւ ս. Գայանի տաճարում պատարագ մատուցեց արժ. տ. Նշան քհն. Բեյրիւրյանը և քարոզեց «Անձինք նուիրեալք» բնաբանով:

*
* *

Հունիսի 5-ին, հինգշաբթի.—Տօն Սրբոյն Յովհաննէս Կարապետին և Աթանաղիենայ եպիսկոպոսին.

Ս. Շողակաթի տաճարում հանդիսավոր պատարագ մատուցեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Հունիսի 8-ին, կիրակի.—Տօն կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը և քարոզեց «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» բնաբանով:

*
* *

Հունիսի 10-ին, երեքշաբթի.—Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողութիւնը, տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանի գլխավորութեամբ, երեքօրյա ուստազնացութեան մեկնեցին դեպի Լոռու պատական վայրերն ու հուշարձանները: Ուսանողները այցելեցին Լենինականի, Կիրովականի, Սանահնի, Հաղպատի և Սևանի վանքերն ու եկեղեցիները:

Հոգևոր ճեմարանի Ա և Բ դասարանների ուսանողները ամառային արձակուրդը կանցկացնեն իրենց ծնողների մոտ, իսկ Գ դասարանի և Ա, Բ, Գ լսարանների ուսանողները աշխատանքի կանցնեն Մայր Աթոռում, Նրեանում, Գեղարդա վանքում, Թբիլիսիի, Բաքվի և Ռոստովի հայ եկեղեցիներում:

*
* *

Հունիսի 15-ին, կիրակի.—Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ հոգ. տ. Ներսես Ժ. վրդ. Պողապալյանը քարոզեց «Ողորմութիւն կամիմ և ոչ զոհ» բնաբանով:

*
* *

Հունիսի 22-ին, կիրակի.—Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. տ. Ներսես Ժ. վրդ. Պողապալյանը՝ «Ի վերայ աջոյն և էջմիածնի ամենայն ազգս հայոց կապեալ կա» բնաբանով:

*
* *

Հունիսի 26-ին, ճիգզաբքի.—Սրբոց Թարգմաչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ.

Օրվա տոնի առթիվ եպիսկոպոսական հանդիսավոր ս. պատարագ մատուցվեց Օշականի ս. Մեսրոպի անվան եկեղեցում: Պատարագեց Արարատյան թեմի հայրապետական փոխանորդ գեր. տ. Վահան եպս. Տերյանը և քարոզեց «Որք զարդարեցին տնօրինարար» բնաբանով:

*
* *

Հունիսի 29-ին, կիրակի.—Գիւտ տփոյ ս. Աստուածածնի.

Օրվա տոնի առթիվ Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը:





ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Հունիսի 20-ին, ուրբաթ օրը, ժամը 15-ին, Երևանում, Արտասահմանի հետ մշակութային կապի ընկերության սրահում, տեղի ունեցավ Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի ընդլայնված նիստը, որին մասնակցում էին մշակույթի, գիտության, արվեստի ու մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ:

Մայր Աթոռի կողմից նիստին մասնակցում էին հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես Ծ. վրդ. Պողոսյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիսյանը և դիվանապետ Հայկ Առաքելյանը:

Ժողովում քննարկվեց վերջերս բանվորական կուսակցությունների Մոսկվայի միջազգային խորհրդակցության ընդունած «Խաղաղության պաշտպանության կոչը»՝ ուղղված բովանդակ աշխարհի աշխատավորությանը, կրոնական համայնքների և տարբեր դավանությանը տեղ մարդկանց, մտավորականներին, գիտության, արվեստի գործիչներին, երկրագնդի բոլոր մայրերին և հայրերին, երիտասարդությանն ու ուսանողությանը, բարի կամքի տեղ բոլոր մարդկանց, իրենց սրտագին ջանքերը, աշխատանքները միացնելու, է՛լ ավելի ակտիվորեն պայքարելու համար հանուն մնայուն և երկարատև խաղաղության՝ ընդդեմ ժողովուրդներին ստրկացնել փորձելու նոր ուժերի, ընդդեմ միջուկային պատերազմի, որը բացահայտորեն վտանգի տակ է դնում ամբողջ հողագնդի ողջ մարդկության ճակատագիրը և քաղաքակրթության ապագան:

Ժողովը ներածական բովանդակալից ճառով բացեց Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի նախագահության անդամ, բանասիրական գիտությունների թեկնածու, գրականագետ Կ. Դալլաքյանը:

Այնուհետև ելույթ ունեցան Ասիայի և Աֆրիկայի երկրների հետ համերաշխության հանրապետական կոմիտեի պատասխանատու քարտուղար Հ. Հակոբյանը, Հայկական

ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ և Կիրովի անվան քիմիական կոմբինատի բանվոր Խ. Գրիգորյանը, տնտեսագիտական գիտությունների թեկնածու Ա. Եղիազարյանը, հանրապետության սոցիալական ապահովության մինիստրի տեղակալ Ա. Նալբանդյանը:

Ժողովը սրտագին մթնոլորտում, միահամուռ և վճռական կերպով հավանություն տվեց ներկայացված խաղաղության կոչին:

Ժողովում որոշվեց նաև, հանուն հանրապետության ողջ հասարակայնության, ողջունի հեռագիր ուղարկել Բեռլին՝ Խաղաղության համաշխարհային համաժողովի հրքայանական կոնգրեսին, որը գումարվում է հունիսի 21—24 օրերին Արևելյան Բեռլինում, և որին մասնակցում է նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Աշխարհի այսօրվա իրադրությունը, — ասված է հեռագրում, — հրամայաբար պահանջում է խաղաղ համագործակցության մթնոլորտ, ժողովուրդների միջև փոխըմբռնում և քաղականության հաստատում, և բարի կամքի տեղ բոլոր մարդկանց ջանքերի մեծ լարում»՝ հանուն խաղաղության մղված պայքարում:

Խաղաղությունը կհաղթի պատերազմին:

Պատերազմը անհամատեղելի է մարդու կոչումին և մեր քրիստոնեական խղճի և հավատքի հետ:

Խաղաղությունը Աստծու կամքն է և պատգամը:

Հայ ժողովուրդը, որն ամեն օր ջերմորեն աղոթում է «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի», և որը պատմական անցյալում լիապես ճաշակել է պատերազմի դառնությունն ու իղբերգությունը, խաղաղություն է պահանջում և պայքարում, աշխատում, աղոթում է երկրագնդի վրա մնայուն ու քրիստոսավանդ խաղաղության հաստատման և հաղթանակի համար:

Անմահ է ժողովուրդը, և արդար է նրա՝ հանուն խաղաղության մղած սուրբ գործը:



ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ*

Համար 18

Բերա. օգոստ. 28/10 սեպտ. 1911.

Միրեցյալ Երվանդ.

Բավական ուշացավ այս անգամ պատասխանը, և նոր ստացա օգոստոսի 16-ին գրածդ: Վերջին անգամ ա. Կոստանյանի գրելով հիշած էի, թե պատասխանիդ կապասեմ, որ գրեմ:

Մշակի մեջ գրած գրախոսականներդ կարդացի և շնորհակալ եմ, որ Ատրպետի և Մելլանի շաղփաղությունաց ալ պատասխանած էիր: Ես իմ կողմես լուրջացան կանոն մը կազմած ըլլալով՝ դեռ չեմ ուզեր ավելի: Երկու վախ ունիմ. մեկը որ մեջտեղ ելնելու կասկած կրնամ տալ, և մյուսը որ անգամ մը եթե բռնվիմ, այլևս բոլոր անով զբաղելու եմ: Հետեւաբար դեռ իմ ճանաչես շեղել չեմ ուզեր, քայց գոհ կըլլամ, երբ որ ուրիշներ իմ ըսելիքներս կըսեն:

Պատճառ մըն ալ պաշտոնական ամբաստանություն, քննություն ու որոշողությունն է. պետք չէ որ ոչ գործը խառնեն, և ոչ ալ կանոններն ամեն քան դուրս հանեն՝ պաշտոնական ըսելիքը չլսած. կրնա որ ավելորդ խոսած ըլլամ կամ թե նոր բծախնդրությանց առիթ ընծայեմ:

Երեք տարի համբերեցի, դեռ քիչ մըն ալ համբերության պաշար ունիմ: Կտեսնեմ որ իմ լուրջու հանդեպ ուրիշներ լեզու կելլեն. այս ավելի լավ է:

Ընտրողական պայքարը երթալով կաստկանա:

Եթե Տեր-Մկրտչյանի [Կարապետ եպիսկոպոս] վրա պիտի կայնինք, ես ալ տասը մատերով կստորագրեմ. և կսիրեմ թագավորաֆայր ըլլալ քան թագավոր:

Մանկունիի և ոչ իսկ անունը տված է. միայն թե քանի որ տեղապահ է և ուրիշ տեղապահացու և պատրիարքացու չեն գտներ, չեն ուզեր զայն բողոքովին կոտրել. թեպետ շատ ալ հարգ ու վարկ չեն տածեր անոր մասին, և քանի որ կա, թող մնա՝ կըսեն:

Լրագրական թղթակցության համար խոսեցա Բյուզանդիոնի պետին՝ Քեչյան Էֆենտիի: Նա պատրաստ է թղթակցությունները հրատարակել, լրագիրն ալ հղել*:

Բայց լուր տեսությունն է, որ Պոլսո մեջ, քանի որ դեռ պաշտոնական ձևակերպությունները լրացած չեն, Օրմանյանի անունը տալու չէ, վասնզի ոչ միայն օգոստ չբերեր, այլև կրնա վնասել, և հակառակորդները կգրգռեն, որ եթե չկարենան ալ նոր բան մը ընել, կհորդորվին ամբաստանյալի վիճակը երկարել տալ կերպ-կերպ բաղբաջանքներով:

Ինքն կկարծեն թե այդ կետը ավելի Կովկասի մեջ մշակելու է:

Ըստ այսմ իրեն կվերապահեն եկած թղթակցությունները այդ ձևին հարմարեցնել, եթե երբեք տարբեր ոճով գրված ըլլան:

Այսչափ այս անգամ. ողջուն ընտանյացդ

Մաղ. արք. Օրմ.:

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի 1969 թվականի №№ 9 և Ե-ից:

* Խնդիրը վերաբերում էր իմ մի շարք հոդվածներին անխտիր բոլոր կաթողիկոսական թեկնածուների մասին, որոնք և առանց որևէ փոփոխության ու վերապահության տպագրվեցին «Բյուզանդիոն» օրաթերթում 1911 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ընթացքում:

Համար 19

Քերտ. 9/22 հոկտեմբեր 1911.

**Մեծարգո սիրելի
պր. Երվանդ Տեր-Մինասյանց.**

Վերջին ամսակն սեպտեմբերի 28-ին գրված էր: Կարապետ եպիսկոպոսի կենսագրականը դեռ ձեռքս չի նկատվել, բայց առաջիկա ընտրության ատյանի հող-վածներդ Բյուզանդիոնի և Մշակի վրա ալ տեսա: Միտք հայտնելու պետք չունիմ. միտքս հայտնի է: Սակայն Մանկունիի վրա շատ վազեր էիր, և մարդը հիմա կուզե ջնջել տալ Դերջանե Քեզի տրված փոխանորդությունը*, որպեսզի չկարենաս գրածդ քերականի ալ առջև տանիլ:

Իսկ ընտրողական պայքարը երթալով կասատկանա. բայց ավելի բացասական պայքար է Օրմանյանի դեմ, քան դրական պայքար մը այս կամ այն անձի համար: Կանոխեն ակնարկած զենքերս ավելի կարվին, ստությունն ու գրաբարտությունը, որ հաջող են ոմանք շփոթելու և ուրիշները ահաբեկելու: Գործերուն ընթացքը ևս քան զկա կցուցնե, որ Օրմանյան չանցնիր: Ոմանք բացարձակ ընդդիմության քով խոհական ընդդիմություն մըն ալ կկազմվի, թե կաթողիկոսի անձը պետք չէ անձնական հակառակությանց առարկա ըլլա, որպեսզի կովածաղիկ չդառնա, և գործունեության մի մասը անձնական խնդիրներու զոհել չպարտավորվի: Այդ ուղղության հետևյալներն է Բյուզանդիոնի ալ գրածը, թեպետ հայտնի չըսեր որ ընդդիմադիրներու տեղի տված չկարծվի: Ի մուրացածու պատճառաբանությանց կդիմե:

Սակայն ընդհանուր գործը ասով վնասված չեմ կարծեր, վասնզի միտքերը ավելի Կարապետ եպիսկոպոսի կողմը կհակին, և նա ավելի օգտակար կընա ըլլալ, իբրև ավելի մոտ, ավելի ժիր և ավելի հմուտ անձ. հետևաբար պետք է որ անոր անձը իբրև չեզոք պահվի, շատ չխոսի, չգրե, և մինչև իսկ ես իրեն խորհուրդ տվի, որ անձամբ ներկա չըլլա ժողովին, որ չպարտավորվի հայտարարություններ ընել, բանակոխի չըրմով, և միշտ բարձր ու հեռավոր մնա, որ գորավոր ըլլա:

Գալով Ռուսաստանի սովոր մեծամասնության՝ ժողովուրդը չէ որ կքվեարկե. Պարսկաստանով մեկտեղ 8 աշխարհական քվե կա, որոնց հազիվ կեալ օրմանյանական կընա ըլլալ, և 23 եկեղեցական քվե, որոնցմե հազիվ 5—6 Օրմանյանի կողմ. այնպես որ

* Տանկահայ պատգամավորները որևէ պատճառով ընտրությանը անձամբ մասնակցել չկարողանալու դեպքում իրենց փոխանորդ էին զանապուր Ռուսահայերից: Ինձ այդպիսի փոխանորդություն էին տվել՝ Բաբգեն եպիսկոպոս Կոլիկանյանի հանձնարարությամբ՝ վերոհիշյալ թեմից, որը, սակայն, խանգարեց Մանկունիին իր անձնական հաշիվներն, ինձ հետ մաքրելու համար:

նույնիսկ Ռուսահայոց մեջ մեծամասնություն չկա. իսկ տանկահայք տակավին ամբողջավարձերն կքաշվին, և հետևանքն ալ հայտնի է: Իսկ Կարապետի անունը հավանաբար ավելի քվե կունենա, քան թե Օրմանյանին:

Շարաք մըն է որ Տիրայր վրդ. այստեղ է. և զրեթև ամեն օր տեսակցեցանք և խորհրդակցեցանք. իմ տեսություններս կգնահատե, և Քեզի ալ պիտի գրե. վաղը կմեկնի Քիշնև:

Գարեգին վրդ.-ն լուր չունիմ նորերս: 4/17-ին միտք ուներ Եգիպտոսե մեկնիլ, թերևս Զմյուռնիա հանդիպիլ, անկե հոս գալ և ասկե Էջմիածին: Հարկավ այլևս շատ չուշանար:

Բաբգեն անգործ չէ. փոխանորդացուներ հանձնարարելը լսեցիր, որուն համար ամբաստանություն կազմեցին, բայց ինքն արհաբար պատասխանեց Ազատամարտին: Հանձնարարություններդ իրեն կհաղորդեմ:

Ես հանգիստ և առողջ եմ Տերամբ: Հանի գրաբարտություններ կշտնամ, ես իմ ընթացքս չեմ փոխել, հրապարակ չեմ նետվիր: Իսկ մեր ընդհանուր ժողովը լուր անորակելի ձգձգումներով կօրորվի:

Այս օրեր Մանկունիի տեղապահությունն ձանձրացած՝ պատրիարք ընտրելու միտք ունիմ, բայց չեմ կարծեր, որ շուտով կարենան մեջեն ելնել, քանի որ հայտնի ընտրելի կամ ընտրելիներ չունին:

Ողջունիվ սիրո Քեզ և տիկնոջդ և օրհնությամբ գավակիդ մնամ միշտ

Մաղ. արք. Օրմ.:

Լուր առի, թե Տիրայր վրդ. Պաղդատե նշանակվել է Բաբգեն եպիսկոպոսի միջնորդությամբ:

Համար 20

Քերտ, նոյ. 29/12 դեկտ. 1911.

Սիրելի Երվանդ.

Այսօր հասավ նոյեմբեր 17 թվակիր նամակդ: Եվ թեպետ այլևս շատ ու շատ գրելու բան մը չմնաց, բայց իսկույն կպատասխանեմ, գլխավորապես Բաբգեն եպիսկոպոսի նամակը ես դարձնելու համար: Այս վարկենես նա արդեն Տիգրիս հասած կըլլա, Քեզի ավելի մոտ է, քան ինձի. և թերևս ալ արդեն գրած եք. ուստի նամակը փոխանակ Բաբգենի դրուկելու Քեզի կդարձնեմ, որ ինչպես ուզես, այնպես գործածես:

Իսկ Զավեն եպիսկոպոսի* անձամբ գալուն խընդիրն ալ զանապուրությունը կորսնցուց, զի Գարեգին վրդ. նորագույն կարգադրությամբ պիտի կարենա փոխանորդել, և կընա օգտակարապես տեղը լրացնել: Դուն անապարեք ես հեռագրել. ես քան մը ընել պետք չեմ տեսներ:

* Խոսքը վերաբերում է Զավեն եպիսկոպոս Տեր-Եղիայանին, Արմաշական, Կ. Պոլսի հետագա պատրիարք:

Բաղնի առաջնորդ Եզնիկ վրդ. Գալիաքճյան ալ անձամբ գալու դժվարություն զգալուն՝ իրեն փոխանորդ նշանակած է Եզաչյան Մուշե Վարդապետը։ Այն ալ կրնա ցուցակել անցընել։ Բայց դեռ մեծամասնություն չկազմվիլ։

Թուրքիայէ գալիքներուն շատ հույս եք դրեր. բայց այս կողմէն ավելի են աննպատակները քան նպատակները։ Ռեւոլյուսիոն շատ հիմնավոր չեմ գտներ հաշիվդ։

Ես դեռ շատ վստահություն չունիմ. անոր համար նախագոյությունը գրեցի Տփղիսի պատգամավորներուն պատասխան։ Միշտ լավ է առջև նետված չլրեալ։

Ինձի համար ոչ-նպատակավոր փաստերը կմնան տակավին։

- 1. Անքատաւայալ է.
- 2. Հերձված կելլա.
- 3. Գաղտնի (?) քվեի ակնածանքը։ Իսկ իրր նր-պատասխան փաստ կկատարմ միայն։

Դիմացեն որոշված և ամենուն հաճելի ընտրելի չունին, և այս կերպով կրնան քվեցին ցրվիլ, եթե համերաշխության մը չհաճգին։

Ավելի չեմ երկարեր այս անգամ։ Ես առողջ եմ Աստուծով, կաշխատիմ կանոնավորապես, առանց զգացվելու չորս կողմս բարձրացող մորիկեն։

Երկու օրէն, ուրբաթ օր պատրիարքի ընտրություն պիտի կատարվի. ընտրելին Արշարունի Հովհաննէս արքեպիսկոպոսն է։ Նա ալ շատ երկար չմնար։

Բժշկապետ Բաբայանց Ալեքսանդրապով եկած կըլլա. հասցեն չգիտնալու՝ Քեզմէ կխնդրեմ հաճճնել պատասխան։

Թորամանյան ճարտարապետին դրկած գիրքին փոխարեն պիտի գրեմ, բայց հասցեն չեմ գիտեր։

Ողջույն սիրո և բարեմաղթո օրհնություն Քեզ և Քոյոցդ։

Մաղ. արք. Օրմ.:

* * *

Համար 21
Բերա, 1/14 հունվար 1912.

Միրեցյալ Երվանդ,
Դեկտ. 20 թվակիր նամակով տված տեղեկություններդ կրթացնեն լրագիրներն ստացված ծանոթությունները, և կնկարեն գործին իսկությունը։ Եկող սլաւագամավորներն միայն Գ. Արուշանը տեսա տակավին, Բաբգեն եպիսկոպոս դեռ մեջտեղ չեղալ։

Ես ալ համամիտ եմ բողոքողներու ընթացքը արդարացնել իրենց միտքին և ուղղության տեսակետն. բայց չէի ուզեր որ անկա միջև ընտրությունը քեկանելու փաստ դառնար. լավագույնը կսեպեմ որևիցէ կերպով գործը փակել, քան թէ երկար ձգձգումներու մատնել, տակավին երկար ժամանակ անգլոյիս թողլով Մայր Աթոռը, գոր հույժ վնասակար կնկատեմ։

Բողոքը հարմարագույն է ծառայեցնել իրր ապագա

կարգադրությանց փաստ, այսպես են՝ 1. Ռուսաբան լոք քվեները տաճկաբան լոք հետ համեմատության քեկել։ 2. Գաղտնի քվեի դրությունը ամեն մասնոր վրա տարանել։ 3. Պատգամավորներու անձնական հանգամանքներուն և ազատ կարծիքին մասին որոշ ապահովություններ հաստատել։ 4. Նախորդին մասկան ետքը ընտրության սլայմահաժամը միջև երեք ամիս կարճեցնել։ Այս կետերը պետք է այժմէն մշակել, և նոր կաթողիկոսին օծվելէն անմիջապես ետքը բանակցությանց ձեռնարկել։

Ինձի գալով՝ այստեղ սկսան ըսել, թէ քանի որ պատրիարքական և կաթողիկոսական ընտրությունները լրացան, ա՛լ կրնանք Օրմանյանի գործը վերջացնել, բայց ես չեմ հավատար։ Կաթողիկոսական ընտրությունը ապահովված չնկատվիր, պատրիարքությունն ալ կրնա մոտալուտ տագնապի ենթարկվիլ, ուստի պետք կըլլա տակավին ատեն մը Օրմանյանը կախակայալ պահել։ Այսպես կնախատեսեմ, և այսպես ալ հանձնառու եղած եմ միտքովս։

Ուստի լուտ և անշշուկ կշարունակեմ իմ պատմությունով զբաղիլ, որ բավական հառաջացալ, միջև ժե դար. բայց հետագայք շատ ավելի ցրված, և շատ ավելի բազմաճղի են, աղբյուրներն ալ հատուկոր հիշատակներ են։ Առողջությունս լավ է, և երանի թէ ամեն մտազբաղութեն ազատի, որ հանդաքրտին գործիս պարապելի։

Կհուսամ թէ դուն ալ հանգիստ ես, առողջությամբ լավ, զբաղմունքով հաջող և ընտանիքով մխիթարված։ Այս կետերուն մասին ջերմ բարեմաղթություններ կընեմ Ամանորիս առթիվ, և օրհնաձայն ողջուցիվ մնամ

Մաղ. արք. Օրմ.:

* * *
Համար 22

Բերա, 7/20 մայիս 1912.

Սիրելի Երվանդ.

Մարտ 29-ի նամակդ ժամանակին ստացած եմ, որ գլխավորապես կխոսիս կաթողիկոսության սպաւած վավերացումին վրա։ Այսօր այդ բանը լրացալ գործ է, և այլևս վրան չիտսվիր, անկեղծ ըլլալով՝ ամենէն վատ լուծումն ալ չէ, վասնզի չգիտցվիր թէ ինչ ժխորներ պիտի հուզվեին երկրորդ ընտրության մեջ, և թէ ով կըլլար երկրորդ անգամ ընտրվածը, որ կըրնա Սուրենյանը փնտրել տալ։

Հիմակ պետք է նորընտիրը շահելու ձևը մտածել, և այս նպատակին նվիրված կտեսնվի Սուքիաս սըրբազանը, տայր Աստված որ հաջողի։

Գիրքեր առած եմ Հուսիկէ, Տիրայրէ, Մուշէն, Կարապետէ։ Ասոնցմէ հոռետեղը Հուսիկ է, քիչ մըն ալ Կարապետը, մյուսները երկմիտ հանդիսատեսներ են։ Ես ալ այդ վերջին դիրքին կհավանիմ։

Դիվանի և շքախումբի կազմությունը Հուսիկը գալթակղեցուցած է, բայց Ներսէս սրբազանի իրր

ընկերակից ընտրվիլը բոլորովին հակառակ նշանակություն ունի:

Ես ալ համամիտ եմ որ Սուրենյանցը՝ ինքն իրեն մնալով՝ նորանոր ձեռնարկներ սպասելու չէ. բայց ինչ լավ շրջապատի կրնա օգտակար ըլլալ: Ընտրուողական կանոններու բարեփոխությունը վարեն սկսելու է հուզել. և թեմական ժողովուրդներ կրնան կաթողիկոսին դիմել որ այդ խնդիրը ձեռք առնեն, և յուր անձնասիրությունը զգլելով գործի մղել:

Հուսիկ կուզե շուտով Նախիջևանի հոգևոր կառավարություն անցնել. իրեն գրեցի չշտապել, քանի որ հանձնառու կըլլա Էջմիածնի սինոդականն Նախիջևանի տերտեր դստնալ, միշտ իրեն աստեն կա այդ բանը ընելու:

Մուշեհն գրածին համեմատ՝ Մեսրոպի, Մատթեոսի և Բարսեղի գաղտնական պաշտոններ կապտրաստվին. ըսել է թե անոնցմով շրջապատվելու միտք չունի:

Իմ ամենուն գրածս այս է. հանդարտ շարժվիլ. գործեր չգահալիժել, միջոց ժամանակ մը տալ մինչև որ գույնը լավ դուրս ելլա:

Աչաքսի այս անգամ, ալիկի երբ որ նոր լուրեր հասնին կամ հասցնեն:

Սիրո ողջունիլ մնամ ընտանիքիդ օրհնող և Քեզ քարեմադրու:

Մաղաքիս (արք. Օրմանյան):

Բժշկապետ Բաբայանց մեկնեցա՛վ արդյոք:

* *

Համար 28

Քերա, 15 հուլիս 1912.

Սիրելի Երվանդ.

Վերջին հունիս 24-ի նամակով օրվան մեծ խնդիրն վրա կխոսիս, և քիչ ու շատ համամիտ կելլանք. շատ չվատաբիլ, բայց ոչ կոտրել, այլ սպասել: Իմ ալ ըսածը այս է: Հուլիս 1 և օծում անցան. հիմակ պետք է գործի սպասել:

Երկար չեմ գրել այլևս, զի սպասել ըսելն ետքը ոչ պատճառաբանելու տեղի կմնա, և ոչ մակաբերելու:

Իմ մասին ալ նորություն չունիմ պատմելիք: Ծառ կխոսիմ զիս Երուսաղեմ դրկել լիագոր իշխանությանը. բախական ատենն կխոսիմ, բայց մեջեն չեմ ելլար: Եվ ոչ ալ սա օրհնյալ գործը կվերջացնեն, որ ուրիշ գործի անցնին: Առողջությունս լավ է, և ձեռքս եղած պատմագրությանը կզբաղիմ: Մտադրություն ալ ունիմ մեկ կողմն պրակ-պրակ հրատարակության տալ, և վերջին մասը՝ Սիմեոնն սկսելով՝ հետըզհետե պատրաստել:

Դուկտ. Բաբայանցն նամակ առի կիսվողոսկե:

Մեր պատրիարքարանի գործերը շատ վատ կերթան. անիշխանությունը ամենն թեթև բառն է որակելու համար:

Հուսամ թե Դուն ալ լավ ես, և ընտանյոր մխիթարված և հանգիստ:

Կոմիտաս Գերմանիա է, մոտ ատենն հոս կտարսվի:

Աչաքս ալ աչաքսի, ալիկի գրելիք չունենալուս: Օրհնաձայն ողջունիլ բոլորիդ

Մաղ. արք. Օրմ.:

* *

Համար 24

Քերա, 15 նոյ. 1912.

Երվանդ սիրելի.

Կապանի որոշ լուր մը առնել Քեզմե Ազգապատումի պրակները դրկելու, որոց հետաքրքիր ըլլալդ հայտնի էր, ստանալու իրավունքդ ալ խոստովանալա:

Դուն ալ այս նյութերով զբաղող մըն ես, և կարծիքդ լսելու հետաքրքիր եմ. միայն թե՛ չըլլա թե խորունկ գիտական գործ փնտրես. իմ նպատակս ժողովուրդին իր եկեղեցին ճանչցնել է, ինչպես որ է, և ինչպես որ էր, նույնիսկ իրեն սեփական ավանդությունները հարգելով:

Էջմիածնի լուրեր մերթ ընդ մերթ կստանամ մերիմներեն. բայց արդյունավոր բան մը չեմ լսեր. իտալացի առածին պես՝ շատ մոխ կելլա առանց խորվածի:

Ես մեկ երկու անգամ տեղն ունեցա, տակալվին ալ բոլորովին ազատամ ըլլալս չեմ գիտեր. այսու հանդերձ կշարունակեմ մեկ հրատարակել, և մյուս կողմն խմբագրել: Դավիթ Դանիելյան շփոթին մեջն եմ: Հուսամ թե հանգիստ եք, կանոնավոր զբաղմունք ունիս և զոհացուցիչ կյանք:

Օրհնաձայն ողջուն և Քեզ և Քոյոցդ:

Եթե տեսնաս, ողջունե բժշկապետ Բաբայանը, որուն պատասխանած եմ ժամանակին:

Սիրով մեծալ

Մաղ. արք. Օրմ.:

* *

Համար 25

Քերա, 8 փետրվար 1913.

Սիրեցյալ

Երվանդ Տեր-Մինասյանց.

Ներկայս նորություն պիտի երևի թերևս:

Վերջին անգամ Գերմանիայե, բարեկամն մը ստացածս մեկ տոմսակի մեջ կթելադրվի ինձ՝ իմ Eglise Arménienne հրատարակությունը գերմաներեն թարգմանել տալ, վստահեցնելով թե ծանոթ հրատարակիչ Hinrichs, որ ի Leipzig սիրով հանձնառու կլինի տպագրել տալ:

Մեր պ. Թովմյանի հետ խորհրդակցելով մտածեցինք Քեզի դիմել այդ թարգմանության համար որ

կպահանջեց գերմաներեն լեզու, հաշագիտություն և կրոնական ճշտարանություն: Աստիք Դոսն ունիս, և կարծեմ թե ատեն պլ ունիս:

Ինչ որ օգուտ պիտի կարենա գոյանալ հրատարակութեն, իբրև հեղինակի բաժին, Քեզի կթողում բովանդակ՝ բավականանալով ինձի 20—25 օրինակ ստանալ տպագրվածեն:

Հաճե պատասխանել շուտով: Եթե չունիս, կփութամ գաղղիներեն, և հալերենի երկրորդեն օրինակներ պլ հասցնել: Գաղղիներենի վրա փոքր տարբերություններ կան վերջին հալերենի մեջ:

Թոփճյանն և ինե ողջույններ

Մաղ. արք. Օրմ.:

Գրած եմ հունվար 13-ին:

*
* *

Համար 26

Բերա, 18 մարտ 1918.

Սիրելի Երվանդ Տեր-Մինասյան.

Ալեքսանդրապոլ

Փետրվար 24-ի նամակովդ ինչ-ինչ դիտողություններ կընես «Հայոց եկեղեցին» գիրքիս գերմաներենի թարգմանվելուն մասին, պնդելով թե թարգմանության և տպագրության ծախքը ստանձնող հրատարակիչ չի գտնվիր:

Չկարենալով այդ մասին ինե կարծիք մը կազմել, կամ դիտողությամբ պատասխանել, հարկ սեպեցի Քու գրածներդ հաղորդել Գերմանիայե ինձի դիմող

բարեկամներուն, որպեսզի անոնց պատասխանին համեմատ գործեն:

Այստեղ հայերենին երկրորդ տպագրության հաշագրային ալ տպառեցավ, և ի մոտո երրորդ տպագրության պիտի ձեռնարկեմք:

Մոսկվայե պր. Կ. Կոստանյանց կզրե թե ոռուրեն հրատարակությունը հատաջանալու վրա է:

Լուր ըլլալով շատ բան չկա գրելիք. ես Ազգապատումով կզբաղիմ. շաբաթը երեք օր Մեծ պահոց քարոզ կխոսիմ, և վերջին օրեր ընդհանուր ժողովե երեսփոխան ընտրվեցա եկեղեցականաց կողմեն. տակավին ընելիքս որոշած չեմ:

Ազգապատումի մասին. մինչև հիմա միայն քանի մը հույժ քննադատներու կողմն դիտողություն եղավ, թե շատ գիտական չէ: Ասով ես իմ գործունեութենա չեմ վրիպեր, զի պարզապես ժողովրդական աշխատություն մը ընել ուզած եմ, փափագելով որ ազգայիններ իրենց եկեղեցվույն անցքերու հմուտ ըլլան, զի մինչև հիմա գիտնալու փափագ ունեցողին ձեռքն ալ հանձնելու գիրք մը չունեինք: Եղածներեն շատեր դարոցական են, քահաներ կաթոլիկական, ամենքը համառոտական. մինչ մանր դիպվածներ, լաված աւուրներ, anecdotique պարագաներ պետք է ժողովուրդին մեջ տարածվին: Ազգային զգացումներ աւուրներով կմշակվին: Այս է համոզումս և անոր կծառայեմ:

Ողջույն պիտի ինե և Կոմիտաս վարդապետե Քեզի և Քոյոց:

Մաղ. արք. Օրմ.:

«Հին Աստվածները» առանձին ծրարով կհղեմ. Ազգապատումին 8-րդ պրակը հղած եմ:

(Շարունակելի)



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՄԱՀԸ



Սույն թվականի հունիսի 3-ին Երևանում վախճանվեց Մայր Աթոռի հարազատ գավակ և հայ եկեղեցու միության ու միասնականության ջերմ պաշտպան Հովհաննես Մանուկի Բարսեղյանը:

Հունիսի 8-ին, կիրակի օրը, Մայր տաճարում հանգուցյալի հիշատակին կատարվեց հոգեհանգիստ՝ Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո:

Հովհ. Բարսեղյանը ծնվել է 1897 թվականին Իգդիր քաղաքում: Դեռևս վաղ մանկության տարիներին զրկվել է հորից և ճաշակել որբության ու զրկանքի դառնությունը: Պատանեկան տարիներին հորեղբոր օգնությամբ մեկնել է Մոսկվա՝ այն ժամանակվա համար հազվագյուտ մի մասնագիտություն՝ մեքենագիտություն սովորելու: Ուսումնառության ընթացքում և գործում է Պարսկաստանում: Նա առաջիններից եղավ, որ ջերմորեն ողջունեց իր հայրենիքի ազատությունը ու անկախությունը և հարստությունն ընկրկեց վերածնված հայրենիքի և ժողովրդի պաշտպանության գործին:

Հանգուցյալը հայրենասիրական մեծ գործունեություն է ծավալում Պարսկաստանում.

1937 թվականին իր միջոցներով Հազվին քաղաքում կառուցում է մի եկեղեցի, որը մինչև այժմ էլ գործում է:

Նա երկար ժամանակ եղել է ՀՕԿ-ի Ահվազի մասնաճյուղի նախագահ և հսկայական գումարներ է հավաքել ու փոխանցել սայր հայրենիք: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Հ. Բարսեղյանը ամբողջ հոգով նվիրվել է հայրենիքին օգնելու մեծ ու շնորհակալ գործին: Նա եղել է Պարսկաստանում կազմակերպված «Հովհաննես Բարսեղյան» տանկային շարասյան, «Պատերազմից տուժած որբ ու անապատան երեխաների օգնության» և «Հայաստանի մանկատներին օգնող» ֆոնդերի ու կազմակերպությունների անդամ և պատասխանատու: զանազան: Բարսեղյանը եղել է նաև այն մասնախմբի անդամը, որը ոսկե սուր է նվիրել մարշալ Հովհաննես Բարսեղյանին:

Եվ, ի վերջո, հանգուցյալը եղել է հայրենագարծության հանձնախմբի ակտիվ մասնակիցներից մեկը և գլխավորել է Պարսկաստանից 1946 թ. հայրենիք վերադարձող առաջին և ամենամեծ քարավանը:

Հանգուցյալը իր հայրենասիրության և եկեղեցաշինության մեծ գործունեության համար արժանացել է լուսահոգի Ս. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի և Վազգեն Ա Հայոց Հայրապետի բարձր գնահատանքին՝ սրբատառ կոնդակների և ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի ականակոտ շքանշանի: Նա արժանացել է նաև պետական պարգևի՝ «Աշխատանքային արիության» մեդալի՝ իր հայրենասիրական և հասարակական անձնուրաց աշխատանքների համար:

Հ. Բարսեղյանը եղել է Մայր Աթոռ ու Էջմիածնի հավատարիմ գավակ և մինչև իր կյանքի վերջը աշխատել է բարձր պահել հայ եկեղեցու դարավոր կենտրոն ու Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության առաքելատուր եկեղեցականությունն ու հմայքը:

Թող միշտ՝ օրհնված լինի նրա հիշատակը: Հանգիստ իր ոսկորներին:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ

(1868—1919)*

8271. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ ԿԱՐԱՊԵՏ:—«Տի Մովսիսի պատմությունը»: [Ռուսմասիրություն, ընագիր]: 1895, էջ 118—121, № 4, հավելված, էջ 11—12:

8272. Բնագիր՝ Սրբոյն Թեոփորոսի ծննդեանն եւ սընդեղեանն եւ վարոց նորա: Հավելված էջ 11—12: Սկ. Ի ժամանակին, յորում Մակեդովացին Աղքատորոս Փիլիպեանն կոչեցեալ...

Բնագիր՝ Մովսէսի Խորենացոյ ի Հայոց պատմությունը: Հավելված էջ 12:

Սկ. Իսկ երանելոյն Նունի, վրաց վարպետունոյ որ էր լրնկերաց սրբոյն Հոփսիսեայ փախստեամբ հասեալ յաշխարհն վրաց...

Հոլվածագիր՝ ենթադրությամբ՝ Բ. Թեոփորոսի վկայարանության հատվածը Մովսես Խորենացու պատմության հավելյալ մասերից մեկն է:

8272. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ ԿԱՐԱՊԵՏ:—Կենդանության սինը: [Ս. Էջմիածնի նշանակությունը հայ ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքում]: 1895, էջ 177—182:

Ստորագր.՝ Կ. Կ.:

8278. [Կ. ՊՈԼՍԻ] հայ վաճառական Պատրիկ Կյուլպեկյանի, 700 ոսկու նվիրատվությամբ Ազգային հիվանդանոցի մոտ գտնված և Հակոբ վանքի և Խարակից շենքերի վերանորոգման մասին]: 1895, էջ 174:

Անվերնագիր՝ «Տաճկահայք» խորագրի տակ:

8274. [Կ. ՊՈԼՍԻ] հայոց եկեղեցիներում խորվանդան Հայրիկի և Կ. Պոլսի պատրիարք Իգմիրյանի անդրանիկ կոնդակները կարդալու մասին]: 1895, էջ 75—78:

Անվերնագիր՝ «Տաճկահայք» խորագրի տակ:

8275. ՀԱՅ ԳԱՍԿԱՐՔ: [Ժող. բանահյուսութ.]: Հավաքեց՝ Հակոբյան Ս.: 1895, էջ 397—400:

8276. ՀԱՅ ԿԱՅՈՒՄԻ ԵԿԵՂԵՑԻ: 1895, էջ 116:

[Ծանուցագիր՝ Վիեննայի Միսիոնարյան միաբանությունից: «Այդրեանն արուեստագիտական հիմնարկություն» հաստատության կազմակերպման համար: Հաստատության նպատակն է՝ Տաճկաստանի, Ռուսաստանի, Պարսկաստանի և այլ տեղերի հայ երեսխաներին արվեստներ սովորեցնելը]:

8277. [ՀԱՅ] հոռոմակեան Հյուրիկյան Հովհաննես վարդապետի խնդրագիրը Կ. Պոլսի պատրիարքին հայ եկեղեցու գիրքը դառնալու համար]: 1895, էջ 107—108:

Անվերնագիր՝ «Մայր Աթոռ» խորագրի տակ:

8278. ՀԱՅԿՈՒՆԻ Ս. Նշխարներ: Կորած ու մոռացուած հայեր: (Տրապիզոնի հայ-մահմեդական գիւղերն եւ նրանց սամոդութիւնները): 1895, էջ 239—243, 293—297:

Բովանդ. Սեւ գետացոց հայ մահմեդականները առնուած է հետեւեալ պարի երգն, որ աշղղ վարդան ասած է:—Արագ արագ խաղալու պարի երգ:—Համշէն:

8279. ՀԱՅԿՈՒՆԻ Ս.:—Շուրտ եւ Դովաթ: (Ժողովրդական հաստատիւ): [Բնագիր՝ հեղինակի ծանոթագրությունով]: 1895, էջ 210—213:

8280. ՀԱՅԻՆ ու իր հայրենա ազգերը: Նմուշներ ժող. բանահյուսությունից: Հավաքեց՝ Կ. Կ. [Դատյան Խաչիկ վարդապետ]: 1895, էջ 305:

Բովանդ. Քրդի հաշիւը:—Թուրքի հաշիւը:

8281. ՀԱՆԱՍԱՐԱԿՆՈՒԹԻՒՆ մարմնական և հոգեկան աշխատանքի: Թարգմ. Գ. Ս.: 1895, էջ 394—396:

8282. ՀՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ:—[Ռուսական հնագիտական կաճար գործունեության սկիզբը Կ. Պոլսում]: 1895, էջ 304:

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի 1988 թ. № 26-ի ԺԱ.—ԺԲ-ից և 1969 թ. № 26-ից:

«Մանրալույս» խորագրի տակ:

8288. ՀՈՒԹՈՒԹԻՒՆ եւ Սամել հովիկ: [Ժող. բանահյուսութ.]: Հավաքեց. Հակոբյան Ս.: 1895, էջ 354—361:

8284. ՀՐԱՆԷՐ: [«Արարատ»-ում հայ եկեղեցիների մասին հոդվածներ տպագրելու համար]: 1895, էջ 135—136:

8285. [ՀՐԴԵՀ Կ. Պոլսի Սամաթիա թաղամասում]: 1895, էջ 174:

Անվերնագիր՝ «Տաճկահայք» խորագրի տակ:

8286. ՂԱՐԱՐԱՂԻ ժողովրդական ջորահան երգերից: [Չափածո]: Գրի առաջ՝ Դ. Կ. [Դատյան Խաչիկ վարդապետ]: 1895, էջ 469—471:

8287. ՄԵՄԱՐԱՆ:—Գեորգեան ճեմարանի վարչությունը ստացել է հետեւեալ գրութիւնը Սիմֆերոպոլի նահանգական դատարանի դատախազից, 1895, փետր. 24, հ. 1986. [Ղ. Յ. Բերբերյանի անվամբ թուշակ նշանակելու մասին]: 1895, էջ 136:

8288. [ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ: Կյուրեղ եպիսկոպոս Սրապյանի]: 1895, էջ 103:

Անվերնագիր՝ «Մայր Աթոռ» խորագրի տակ:

8289. ՄԱՍՈՒԼ եւ եկեղեցի: [Ժամանակակից հայ մամուլի մասին]: 1895, էջ 171—172:

8290. ՄԱՅՐ Աթոռ: 1895, էջ 33—35, 70, 103—104, 136, 172—173, 218, 259—263, 306—310, 362—363, 402—403, 442—443:

8291. [ՄԱՅՐ Աթոռ: Գոհաբանական մաղթանք Ալեքսանդրա Զեղորույկյանի ծննդյան տոնի առթիւ]: 1895, էջ 218:

8292. ՄԱՅՐ Աթոռ: [Մայր տաճարի տանքի վերանորոգություն: Նոր թանգարանի շինություն: Գայանի վանքի և ճեմարանի շենքերի վերանորոգման աշխատանքներ]: 1895, էջ 402:

8293. ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ և Էջմիածին: Ընծայ Կ. Էջմիածնի տոնի առթիւ: 1895, 4 լուսնիս: [Գծանկար]: Նկարիչ՝ Ղ. Շահբազեան: 1895, № 6, էջ [1]:

8294. ՄԱՆՐԱՆՈՒՐ: 1895, էջ 28—29, 67—68, 100—102, 134—135, 169—171, 213—215, 249—250, 303—305, 401, 438—440:

8295. ՄԱՏԵՆԱԳՈՒՄԻՒԹԻՒՆ: Մանկություն (մանուկների համար). հայ մայրերի և իրանց փոքր մանուկների օգտին. Յօրինեց Զաք. Գրիգորեանը: 1895:—Բացատրական ձեռնարկ «Մանկություն» կոչուած պատկերազարդ գրքից: Աշխատանքից Զաք. Գրիգորեանը: Թ[իֆլիս]: 1895: [Մատենախոսի անունը հայտնի չէ]: 1895, № 12, շալ. էջ 3:

8296. ՄԱՐԻՆ ՅԷՕԴՈՐՈՎՆԱ:—Էջմիածին: Կաթողիկոսին Ամենայն Հայոց: [Պատասխան հեռագիր Նորիմյան Հայրիկին]: 1895, էջ 403:

Տպագրական սխալ, էջ 403-ի փոխարեն տպագրված է 303:

8297. ՄԵՍՐՈՊ:—Մանկավարժական ճամբարի Սիրելի Վահան: 1895, էջ 428—429:

Ստորագր.՝ Անճնուր ուսուցիչ՝ Մեդրոպ:

8298. ՄՕՆՕ Լ.:—Մողի կիրճը: [Բարդախտություն: Թարգմ. գերմ., թարգմանիչը չի նշվում]: 1895, էջ 273—274:

Հեղինակի անունը հանված է տողատակի ծանոթությունից:

